

3973

ԱՍԿԵՐԻ

ԱՅՀԱՎԱՐԺԱՆ ԶՐԱԴԱՐԱՆ

I

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՆ

ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՄԻԽՉԵՒ 6-ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՎԻԸ

Թարգմ. Լիներլեից
Ա. Տ. Ա. Ս. Յ. Յ. Ա. Ա. Բ.

151. 4
Վ - 52

ԹԻՖԼԻՍ

14 JUL 2009

51-7
Մ-52

ՀԱՅԵՐԻ-ի ՄԱՆԿԱՎԵՐԺՈՒԱՆ ԴՐԱՄԱՆ

ՀԵՂԻՆ ԱՅՐԱԿ

ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

370

9973-46

15684

ՄԻՆՉԻ ՎԵ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱՀԾ

Թարգմ. լեհերէնից

Ա. ՀԻՍԻՑԵԱՆԻ

Հ.Ս.Հ.Հ.Հ. ՀՈՂԻՑԻՆ ԳՐԿԴԱՐԱՆ

71-10-11-22

Հ.Ս.Հ.Հ.Հ. ՊՈՍՏԻ ՊՈԼԻԿԱ

Ա. ԱՅԱՍԻ ՀԱՆԻ ԱՆՎԱԾ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՊԱԽԵՄԻ, ՊՈԼԵ. 7.
1909



Ս Է Ր

Խնձուս սրծարձել սէրը երեխալի սրտում. փաղաքշանքներ.
պարգևներ. մերժում:

Մարդկութեան հէնց սկզբնաւորութիւնից մայրերի սրտերում վառւում է մի ջերմ և ոչ մի կողմնակի նկատումով չարատաւորւած խանդաղատանք դէպի հարազատ զաւակները, — այն մայրական սէրը, այն սուրբ հուրը, որ ամենաթոյլ կոյսին անգամ ճշմարիտ հերոս է դարձնում և առանց աղմուկի կատարել է տալիս կրթութեան ծանր և կնճոռտ գործը. Այդ զգացմունքի օգնութեամբ է, որ մայրը անտրտունջ տանում է ամեն նեղութիւն և անքուն գիշերներ է անցկացնում հիւանդ մանկիկի անկողնու մօտ. Այդ զգացմունքն է, որ նրան պահպանում է մարմնական տկարութիւնից և կարողութիւն է տալիս մի այնպիսի մեծ պաշտօն կատարելու, որպիսին նոյն իսկ ամենառուժեղ տղամարդը անկարող կը լինէր կատարել.

Բայց մօր սէրը երևան չէ գալիս միայն մանուկի կեանքի առաջին շրջանում. այնպէս չէ, ինչպէս աւելի ստորին կարգի կենդանիների մէջ, որոնց մէջ այդ զգացմունքը տեսում է միայն այնքան ժամանակ, քանի որ նորածին էակը չէ կարողանում առանց ծծմօր օգ-

նութեան ապրել: Ընդհակառակը, այդ սէրը տեսում է ամբողջ կեանքի ընթացքում, և երեխայի տարիքն ու հասակը ոչ թէ պակասեցնում են, այլ նոր ոյժ են տալիս նրան: Առանց նպատակի չէ բացել բնութիւնը մայրական կրծքի մէջ սիրոյ այդ անսպառ աղբերը. դրա միջոցով պէտք է պատւաստի նոյնանման խանդաղատանք և երեխայի սրտի մէջ և հետզհետէ պէտք է ընդարձակի այդ զգացմունքը, մինչև որ վերջ ի վերջոյ ընդգրկի ամբողջ մարդկութիւնը և բարձրանայ ամբողջ արարչազործութիւնը սիրելու աստիճանին: Ահագին է ուրեմն մայրական սիրոյ նշանակութիւնը և ահագին է նրա պաշտօնը, սակայն այդ պաշտօնը մայրական բնածին սէրը միայնակ չէ կարող կատարել:

Ճշմարիտ է անշուշտ սէրը ծնում է սէր ու որ առանց իր երեխային անկեղծօրէն սիրելու մայրը ոչ մի կերպ չի կալորդանայ նոյն զգացմունքը ներշնչել նրան և արձարծել նրա սրտի մէջ այն հոգեկան ջերմութիւնը, որի ճառագայթները տարածւում են բոլոր շրջապատող էակների և իրերի վրա: Բայց նոյնպէս ճշմարիտ է որ մայրական սէրը և այդ սիրոյ արտայայտութիւնը պիտի ենթարկեն բանականութեան հակողութեանը, եթէ միայն պիտի թափանցեն մանուկի սրտի խորքը և նրա մէջ առաջ բերեն նոյնպէս հզօր փոխադարձ զգացմունք: Եթէ բաւական լինէր միայն սիրես, որպէսզի սիրւած լինես, մենք յաճախ չէինք տեսնի այն տիսուր երեոյթը, որ նոյն իսկ ամենասատիկ սիրող ծնողների որդիք կամ վերաբերում են նրանց բոլորովին անտարբեր, սառնասիրտ կերպով, կամ

եթէ սիրում են էլ, սիրում են միայն իրենց տեսակ, շատ անգամ պատճառելով նրանց մեծամեծ անբաւականութիւններ և դառնութիւններ: Զի կարելի ասել որ այդպիսի երեխաններ չեն սիրում իրենց մայրերին, միայն թէ դա մի ինքնօրինակ սէր է, որ շաղկապւած է բարոյական ժերութիւնների հետ, որոնք ծնողներին դառնութիւն են պատճառում:

Ոչ թէ այդպիսի սիրոյ մասին է մել խօսքը, այլ մի այնպիսի զգացմունք ենք փափագում, որը մի տեսակ թալիսման է, մի թալիսման, որը երիտասարդին պահպանում է յաջորդ կեանքի մէջ այն ամենից, ինչ որ ստոր է և զազրելի, և դրգում է հետզհետէ առաջադիմելու նշանաբուժեան և առաքինութեան ձանապարհով: Փափագում ենք մի սէր, որը իրաւունք տար հօրը դիմելու ծնողական յարկը թողնող զաւակին և ասելու. «Վարւիր այնպէս, որ երբէք ստիպւած չը լինես ամաչելու մօրդ առջեւ»:

Անզիմելի բան է որ իր զաւակներին չը սիրող մայրը երբէք չի կարող նրանց սրտի մէջ սէր արձարձն: Մի երեխայ, որ մայրական սէր չէ տեսել, ոչ մի գաղափար չի ունենայ այդ զգացմունքի մասին, ուստի չը պէտք է ծածկենք մեր սէրը դէպի զաւակները, այլ պէտք է երեան հանենք համապատասխան և յատուկ ձևով:

Եեր սիրոյ նշանները պիտի յարմարեցրած լինեն երեխայի հասակին և զարդացման: Քանի որ մանուկը գեռ չէ խօսում, քանի որ չէ հասկանում իր շրջապատողներին, քանի որ չէ հասկանում մօր անձնազո՞ւ-

թիւնն ու զոհաբերութիւնները, — մայրը պէտք է նրան ցոյց տայ իր խանդաղատանքը միայն փաղաքշանքներով: Երեխան անգիտակցօրէն հասկանում է համակրութեան այդ ապացոյցները, ժպտում է մօրը, պարզում է ձեռիկները, աչիկները փայլում են, և ինքն էլ միտեսակ աշխատում է դուր գալ:

Երեխայի մեծանալովն ու դարդանալովը, այդ մայրական խանդաղատանքի արտայայտութիւնները պիտի փոխեն, քանի աւելի է երեխան սկսում շրջապատողներին հասկանալ, այնքան աւելի պիտի բերանացի փաղաքշանքները շօշափողական փաղաքշանքների տեղը բռնեն:

Ոչ մի կերպ սակայն այդ փաղաքշանքները չը պիտի կրօստ լինեն, որովհետեւ դա կրօստութիւն է արծարծում նաև մանուկի հոգու մէջ: Շարունակ համրութելով և անդադար գուրգուրելով աւելի չք զրգաի երեխայի մէջ այն իսկական զգացմունքը, որը սէր է կոչւում: Այս չէ նշանակում որ չըպէտք է բոլորովին համբուրէք մանուկին և չըպէտք է գուրգուրէք նրան, միայն թէ այդ չը լինի նրա համար հանապազորդ հաց և ձանձրալի չը դառնայ: Ինչպէս որ շօշափելով փաղաքշելը, նոյնպէս և խօսքերով փաղաքշելը քանի երեխան աւելի հասակ է առնում՝ հետզիետէ պիտի քշանայ, որովհետեւ թէ անդադար համրութելը և թէ խօսքերով անդադար փաղաքշելը կարող է տաղտկալի դառնալ:

Չէ որ բացի մեր խանդաղատանքը արտայայտելու այդ միջոցներից կան ուրիշ, աւելի ազդու միջոցներ, այն է՝ երեխային ուրախութիւն պատճառելը:

Ուրախութիւնը մի երանելի զգացմունք է, որ մանկական սիրութ լցնում է երախտագիտութեամբ, իսկ երախտագիտութիւնը ամենամօտիկ արիւնակիցն է սիրոյ և փոխուում է սիրոյ:

Շատ մայրեր կան, որ երեխայի ամեն ցանկութիւնը կատարում են, մէկ պատճառն այն է, որ թուլակամ են և ուժ չունեն մերժելու իրենց հրեշտակի անուշ, քաղցր խնդիրքը, երկրորդ պատճառն այն է, որ այդ միջոցով կամենում են նրա սէրը գրաւել: Մի կողմ ենք թողնում և ոչինչ չենք ասում ուրիշ ֆլասակար հետևանքների մասին, որ առաջ են զալիս երեխայի երբեմն ամենախիստ ցանկութիւնները գոհացնելոց, կասենք միայն որ մայրիը շատ են սխալում, կարծելով թէ այդ եղանակով կաւելանայ նրա սէրը դէպի մայրը: Այս երեխան, որը սովոր է որ իր ցանկութիւնները իսկոյն կատարեն, մի պարտականութիւն կը համարի այդ, մի այնպիսի պարտականութիւն, որ մայրը պիտի կատարի և որի համար ինքը առանձնապէս չը պիտի երախտագէտ լինի, ինչպէս որ երբուտեցնում են, հազցնում են կամ, այլ սովորական ծառայութիւններ են իրեն անում.

Ճշմարիտ Է՝ մերժումը երեխային ժամանակաւոր տհաճութիւն է պատճառում, բայց դրանով աւելի աչքի կընկնի նրա ուրիշ ցանկութիւններին բաւարարութիւն տալը, իսկ քանի աւելի մեծ է լինում իրաւացի մերժումով երեխային պատճառած տիրութիւնը, այնքան աւելի է լինում այնունետեւ նրա ուրախութիւնը:

Վերջապէս մանկական հոգին էլ, որպէս և հասա-

կաւոր մարդկանց հոգին, չի գնահատում այն ինչ որ հեշտութեամբ է ձեռք բերում: Այդ պատճառով է, որ իրենց զաւակներին երես տալով մայրերը երբէք չը պիտի փոխարքած սիրոյ յոյս ունենան, որովհետև նոյն իսկ մայրական սէրը չի կարող առանց կամքի ուժի դիմանալ: Այն մայրը, որ իր երեխայի բոլոր քմահաճութիւններն ու անհիմն ցանկութիւններն է կատարում, ձեռք չի բերի նրա յարգանքը, երեխան կը սկսի նրա սէրը արհամարհել և բոնանալ նրա վրա, նատաւել որ մեծանալով կը նկատի որ մօր սէրը անզօր և անուժ է:

Ուրեմն ոչ թէ երեխային երես տալը, այլ նոյն իսկ մօր իրաւացի բարկութիւնն է, որ զգալ է տալիս, աչքի ընկնող է դարձնում մայրական սէրը: Երբ մայրը հրաժարում է երեխոյեան երեխային համբուրելուց նրա որևէ է զանցառութեան համար, երբ նա ցոյց է տալիս իր տրամութիւնն ու վիշտը այդ առիթով,—այդ աւելի է երեխային զգալ տալիս մի ըոպէ կորցրած սիրոյ արժէքը, քան թէ ամենամեծ փաղաքշանքներն ե կամակատարութիւնը: Այստեղից բոլորովին չը պէտք է եղբափակէք, որ մենք բոլորովին դէմ ենք փաղաքշանքների, որ երեխան լնքն է պահանջում, երբ ինքը երեխան է մեզ մօտենում, որ իրեն փաղաքշենք. նա այս գէպբում ինքը ճշմարիտ, իսկական սէր է զգում գէպի մեղ և այդ նրա սէրը պահանջում է որ և է կենդանի արտայայտութիւն: Պէտք է օգուտ քաղենք այդ պիսի ըոպէներից և նրան ետ չը մղենք, ձանձրալի չանւաններ այն, ինչ որ երեխայի հոգու իսկական պահանջն է:

Ուստի ետ չը մղենք մեր կրծքին սեղմւող երեխային, չը ձնշենք՝ երբեմն գուցէ ոչ բոլորովին սեփական, բայց միշտ ծշմարիտ զգացմունքի արտայայտութեան այդ միջոցը, չը վիրաւորենք երեխաներին անժամանակ նկատողութիւններով, որովհետև կը սառչեն դէպի մեղ, կը կորցնեն վստահութիւնը—ամենայն սիրոյ այդ հիմունքները: Ամենապարզ գէպերը կարող են և պէտք է ծառայեն այդ զգացմունքի արծարծմանը երեխայի մէջ: Փոքրիկ նէրներ, նոյն իսկ երեխաների համար անհրաժեշտ իրերի նէրներ, եթէ միայն մի առանձին ձևով են տրւում, նրանց մէջ երախտագիտութիւն են զրգուում և սէրն են ամրապնդում: Աւելի մէծ նշանակութիւն ունի նէրաւութեան եղանակը, քան թէ նէրն ինքը: Երեխան գեռ չէ հասկանում իրերի դրամական արժէքը և չէ գնահատում նրանց գնի համեմատ, այլ միայն այն տպաւորութեան համեմատ, որ նրանք իր վրա գործում են: Երեխային աւելի քիչ են յափշտակում և ուրախացնում հազւագիւտ ընծաներ, թանկագին խաղալիքներ, քան թէ մօր ուրախութիւնը, որ փայլում է նրա աչքերում, երբ նա նէրը տալիս է իր զաւակին: Օրինակ՝ երեխան շատ ժամանակ է որ փափագում էր ունենալ մի նկար. այդ իրը նրա սրտի ամենաջերմ ուզածն էր. թէկուզ տասնապատիկ աւելի թանկ ու աւելի գեղեցիկ խաղալիք առնի նրա համար զրա տեղ մայրիկը, նա իր երեխային այն ուրախութիւնը չի պատճառի, ինչ որ առնելով հէնց այդ նկարը: Երեխայի աչքերը կը ցոլան և նրա գէմքը կը փայլի ցնծութիւնից, իսկ եթէ բացի այդ մայրը կը պատմի

թէ որչափ պիտի չարչարւէր, որքան խանութ պիտի
մտնէր, մինչեւ որ գտաւ այդ իրը, այն ժամանակ
ուրախութիւնը, երախտազիտութիւնն ու սէրը դէպի
մայրիկը այլ ևսանկարագրելի կըլինի, որովհետեւ երե-
խայի բաւականութիւնը սաստկացած կը լինի այն բա-
նից, որ նա առաջ տնօսած էր թէ քանի քանի անգամ
չեն կատարւել իր անհիմն և անմիտ ցանկութիւնները:

Այդ գեռ բաւական չէ. եթէ կամենում ենք աւելի
յարատե դարձնել երեխայի մէջ այդ զգացմունքը, հնա-
րենք դէպիկը, որ նա ինքը մեզ համար որ և է բան
անի, զրկելով որևէ բանից իրեն։ Որովհետեւ սիրում
ենք ոչ միայն նրանց. որոնք մեզ բարութիւն են ա-
նում, այլ աւելի ևս նրանց, որոնց ինքներս կարողա-
ցել ենք ո ը և է բարութիւն անել. Թող երեխան մի
քանի ժամանակ նստի իր հիւանդ մօր անկողնու մօտ
և նայի նրան, թող մի փոքր ինքն իր քնի հետ կուի,
որ յանկարծ աչքերը չը փակի. այդ աւելի կուժեղացնի
նրա մանկական սէրը: Թող մայրիկի համար ծաղիկներ
հաւաքի, թող անսպասելի նւէրներ տայ՝ իր ձեռագործը
կամ աշխատանքը, այն ժամանակ նրա կրտարական
սէրը կը դառնայ ներգործական։

Մօրը ցոյց տրւած սիրոյ ամենամեծ աստիճանը,
մեր աշքի առաջ ունեցած հասակում, այն կը լինի,
երբ երեխան կը հրաժարւի որ և է բաւականութիւնից
իր ծնողի օգտին։

Այս արդիւնքը կը ստանանք, եթէ մանկական
առաջին տարիներում նպատակայարմար ուղղութիւն
կը տանք երեխային. երեխան կը մեծանայ ուրախ և

զւարթ մթնոլորտի մէջ, եթէ նրա առաջին տարիները
կը լուսաւորի մայրական անկեղծ սէրը, ոչ թէ մօր
փոխանորդների—դայեակների, դաստիարակչութիւնների
—շինծու քնքութիւնը։ Այն ժամանակ նա ոչ միայն
կը սիրի իր մօրը, այլ և նրան կը յարգի, կը վախե-
նայ՝ չը լինի թէ նրա սէրը կորցնի։

Ի՞նչից է ուրիմն կախած խելացի սէրը։ Այն
յարգանքից և պատկառանքից, որը նախ և առաջ ար-
տայայտում է մանուկի հնագանդութեան մէջ։

Սակայն մի հանգամանքի մասին պիտի այստեղ
յիշենք։ Անիմաց մայրեր, կամենալով երեխայի սէրը
գրաւել, իրենց անսահման սիրոյ անունով են խօսում
և զիմում են երեխային մօտաւորապէս հետեւեալ բա-
ռերով։—Լևոնիկ, զու ինձ չեն սիրում, էլ իմ բարի
տղաս չը կայ։ Աչ, ինչ անբախտ կին եմ։ Այս և
այսպիսի դարձաւածքներ յաճախ դուրս են թոշում թոյլ
մայրութիւնից, որոնք անընդունակ են երեխանե-
րին զեկավարելու։ Կարծում են թէ երեխայի սիրու
կը շարժեն և կը համոզեն իրենց կամքը կատարելու...
բայց չարչազ սիրալում են, որովհետեւ երեխան դեռ
չի հասկանում իր մօր սիրոյ սաստկութիւնը և առհա-
սարակ շուտով ցրւելով՝ բոլորովին մոռանում է նրա
խօսքերը։ Մայրերը չեն հասկանում, որ երեխաները
գեռ չեն ըմբռնում այն կապը, որ կայ մօր սիրոյ և
իրենց խօնարհութեան մէջ, չեն հասկանում, որ երեխայի
սէրը չէ կարող այնպէս մեծ լինել, որպէս մօր սէրը, որ
երեխաները գեռ նոր են սիրել սովորում, մինչդեռ մայ-
րական սէրը արդէն զարգացած կազմակերպւածէ լինում։

ՀԱՍՏԱՆԳՈՒԹԻՒՆ

Երեխայի կամքը: — Ինչպէս ընտելացնել հնագանդուելու: — Հրաման և հրամաններին հնագանդուելու ընտելացնելը: Անհիմ պահանջներ:

Երեխայի չը կազմակերպւած կամքը նման է այն գետին, որը հոսում է աւազոտ հողի վրա և ցածր ափերի մէջ ու տարւայ մեծ մասը չէ կարող ծառայել նաւարկութեան համար, իսկ միւս ժամանակ աւելի վընաս է բերում, քան թէ օգուտ: Կամհնալով այդ գետը աւելի օգտակա դարձնել, ամրացնում ենք նրա ափերը, թումբեր ենք շինում, առուներ ենք անց կացնում, ջրարգիլներ ենք կառուցանում և այդպիսով նրա հոսանքը կանոնաւորում ենք, այնպէս որ նա կարողանում է աւելի մեծ բեռնակիր նաւեր բարձրացնել:

Հէնց այդպէս էլ պէտք է վարւել մանկական անկազմակերպ կամքի հետ: Եւ ինչպէս որ չենք չորացընում գետը, ցանկանալով վերև յիշւած անյարմարութիւնները վերացնել, այնպէս էլ չպէտք է խեղդենք կամքը, որը կարող է երեմն ինքնակամութիւն դառնար այլ պէտք նրան հնագանդութեան սահմանների մէջ առնենք: Եթէ երեխայի կամքը չէ հակասում բանականութեան պահանջներին, չը պիտի արգելըներ դնենք նրա առաջ, ինչպէս որ չենք կանոնաւորում գետի ընթացքը այնտեղ, որտեղ նրա հոսանքը կանոնաւոր է, ափերը բարձր և տաշը բաւականին խոր: Ուրեմն՝ հնագանդութիւնը, երեխայի կամքի են-

թարկութիւնը մեր կամքին՝ միայն կրթութեան մի միջոց է, ոչ թէ կրթութեան բուն նպատակը, տան շինութեան համար անհրաժեշտ նեցուկափայտելոն են, ոչ թէ ինքը առնը: Երեխան մեզ պիտի հնագանդուի ոչ թէ նրա համար, որ ամբողջ կեանքը մեզ լսի, այլ նրա համար, որ ընտելանայ հնագանդուելու բանականութեան ձայնին և իմանայ բարձրագոյն բարոյական օրէնքին հպատակւել: Իսկ քանի որ հնագանդութիւնը բնական յատկութիւն չէ, այլ իւրացըրած, ուստի նամի յայտնի վարժութիւն է պահանջում: Երեխային պէտք է վարժեցնել հնագանդութեան մէջ, ինչպէս որ վարժեցնում ենք ուրիշ առաքինութիւնների մէջ: Մանկական կեանքում դա շատ կարևոր երեսոյթ է, կարծես մի անտեսանելի թել է, որ կապում է դաստիարակին իր սանի հետ, կամքի առաջին կրթութիւնն է: Զուր խօ չեն ասում թէ ով որ իրեն չէ ընտելացըրել հնագանդուելու, երբէք չի կարողանայ ուրիշներին հըրամայել, — ասել է թէ՝ երբէք չի զարգացնի իր կամքը այն աստիճան, որ հարկագրի ուրիշներին իրեն հնագանդուելու: Վերջապէս առանց հնագանդութեան էլ ի՞նչ խօսք կարող է լինել կրթութեան մասին, քանի որ կրթական ամիսալաւ ներգործութիւնները պիտի անհետացնեն և չը պիտի գրօշմւեն մանուկի հոգու մէջ:

Այժմ հարց է ծագում, թէ ի՞նչ աեսակ հնագանդութիւն պիտի լինի մանուկի հնագանդութիւնը կեանքի առաջին շրջանում, մինչև 6 տարեկան հսաւակը:

Երեք տեսակ հնագանդութիւն կայ, մեքենայական, որ կոյր հնագանդութիւն է կոչւում և որին երեխան

հնազանդւում է ընաելացած լինելուց. գիտակցական, երբ արդէն իմանում է և հասկանում է մեր հրամանի շարժառիթը, և վերջապէս՝ մեզ սիրելուց կամ բարոյական օրէնքը յարգելուց առաջացած հնազանդութիւն։ Մանուկից չենք կարող պահանջել վերջին երկու տեսակ հնազանդութիւն, քանի որ նրա բանականութիւնը դեռ սաստիկ թոյլ է, իսկ զգացողութիւնը տարտած է և ոչ բաւականին խոր։ Աւրեմն ամենափոքր հասակից պէտք է պահանջենք, որ կուրօրէն հնազանդու, մեր պատէրներին, մի բան, որ շատ էլ դժւար չէ, միայն թէ պահանջում է մեծ հետեղութիւն և հաստատամութիւն։ Եթէ շատ և շատ ընտանիքներում պատահում ենք անհնազանդ երեխաների, պատճառը ծնողներն են, որոնք չեն իմացել զանազանել թէ ինչ տեսակ հնազանդութիւն է յատուկ մանկական կեանքի ամեն շրջանին։ Նրանց զուր էր գալիս, որ մի հինգ տարեկան մանուկ հասկանում էր կամ հարցնում էր իրենից պահանջւած հնազանդութեան պատճառը։ այդ շոյում էր նրանց սնափառութեանը։ Միամիտները չափազանց ուշ էին նկատում, որ հլու հպատակութեան չընտելացած երեխան չէ սովորել հնազանդւելու նրանց հրամաններին նոյն իսկ այն ժամանակ, երբ լաւ էր հասկանում այդ հրամանների պատճառները։

Ամենից լաւ է այնպիսի բոպէներ ընտրել երեխային հնազանդութեան մէջ վարժեցնելու համար, երբ երեխայի կարմրատակած դէմքի վրանկատում է ուրախ տրամադրութիւն։ Այդ ժամանակ ահա մայրը քաղցր ձայնով մօտ է կանչում իր մանուկին, պատի-

րում է բերել և տանել խաղալիքները, տալիս է փոքրիկ յանձնարարութիւններ, որ նա սիրով կտարարում է։ Իսկ եթէ մայրը պատւէրներ է տալիս այն ժամանակ, երբ երեխան զբաղւած է յինում որևէ ուրիշ բանով և ուշը չէ դարձնում նրա խօսքի վրա, թող զուր չը յանդիմանի նրան, չպատժի, թող անհնազանդութիւն չը համարի այդ, այլ մօտենայ երեխային, մեղմ խօսքերով նրա ուշը հեռացնի այն առարկայից, ինչով նա այդ բոպէին զբաղւած է, և այն ժամանակ թող կրկնի իր հրամաննը։

Նոյնպէս թող մայրը չը ստիպի երեխային հնազանդւելու այն ժամանակ, երբ երեխան զրգուած է լինում, իրասածի է, դէմքը խոտոռեցրել է, յուզւում է, մի խօսքով՝ այն ժամանակ, երբ տրամադրուած չէ հընազանդւելու։

Բոլորովին ուրիշ բան է, երբ երեխան ուրախ է. այն ժամանակ կարելի է մօտ կանչելնրան և այդպիսով կընտելացնի հպատակւելու մեր քաղցր կանչին, և այդ կը լինի արդէն հնազանդութեան կրթութեան առաջին աստիճաննը։

Եվբ այս աստիճանին կընասնենք, կարելի կը լինի հետզհետէ ընդարձակել հրամանների շրջանը, բայց շատ աստիճանաբար և մեծ շրջանկատութեամբ։ Օրինակ՝ երեխաները սովորութիւն ունին դէս ու դէս շպրտել իրենց խաղալիքները։ չը պիտի պահանջենք որ նրանք իսկոյն բոլորն էլ հաւաքեն տեղը դաշտն—այս պահանջը շատ դժւար և ձանձրալի կը լինէր մանուկի համար։ Բայց չէ որ այստեղ մի յարմար դիպւած է ներ-

կայանում նրան կարգապահութեանն ու հնազանդութեան լնտելացնելու, ուստի՝ օգուտ քաղենք այդ գիտւածից, գարսենք բոլոր խաղալիքները բացի մէկից, տուփի մէջ և պատւիրենք որ երեխան դարսի մնացած մէկը—այս արգէն դժւար բան չի լինի նրա համար:

Վարելով այս եղանակով, կամաց կամաց կը նաև լացնենք երեխային աւելի դժւար պատւէրներ կատարելու: Բայց միշտ աչքից չը պիտի բաց թողնենք այն, որը ընարելու է այնպիսի ժամանակ: Երբ երեխան կը կարողանայ յօժարակամ կատարել այդ պատւէրները:

Երբ մանուկը կը սովորի մեր այնպիսի ցանկութիւնները կատարել, որոնք չեն հակասում նրա կամքին, ամեն տեսակ յանդիմանութիւններ և հարկադրութիւններ աւելորդ կը դառնան, որովհետեւ նա արդէն ինքը վարժւած կը չինի անմիջապէս հնալանդելու:

Այնուհետև կարող ենք աւելի մեծացնել մեր պատւէրները:

Հրամայենք արգէն ոչ թէ գուրգուրանքով, այլ աւելի կտրական ձևով: Իսկ այն դէպքում, երբ մանուկի կամքը մեր կամքին հակառակ կը լինի, մեր խօսքը թող կարճ լինի, հակիրճ և կտրուկ, որպէս զի նա գիտենայ որ տւած հրամանը պիտի անպայման կատարի:

Եթէ օրինակ՝ մանուկը զրօսնում է, իսկ մենք նկատում ենք որ տուն վերագառնալու ժամանակ է, առանց այլայլութեան ձեռքիցը բռնենք և տանենք: Գուցէ երեխան լաց լինի, չուզենայ թողնել կանանց դաշտը, պարտէզը, կամենայ աւելի երկար

մնալ մաքուր օդի մէջ, — ուշք չպիտի դարձնենք այդ բանի վրա, իբր թէ նրա լացը չեն լսում, նրա տրամութիւնը չենք նկատում, դարձնենք նրա ուշադրութիւնը որևէ հետաքրքրական առարկայի վրա և իսկոյն կը համոզւի որ բոլորովին անտարբեր ենք դէպի նրա լացն ու տրամութիւնը, որ միենոյն է՝ դրանով ոչինչ շահելու չէ: Այս ճանապարհով նա կը սովորի հրամանները անտրատունջ կատարել:

Այսպէս երեխան ժամանակով կը նաև լանայ մեր հրամանը անփոփոխելի համարելու և լսելով մեր խօսքերը թէ՝ «Ճուն գնանք» ուրախ-ուրախ կը վերադառնայ:

5
0
0
—

Նոյնը վերաբերում է և արգելքներին. օրինակ, երեխան մօտենում է շաքարամանին, որպէս զի մի կտոր շաքար վերցնի: Տեսնելով այդ, չը պիտի ամանը հեռացնենք ու դնենք սեղանի միւս ծայրին, որովհետեւ անշուշտ երեխան կրկին կը մօտենայ շաքարին, այլ հակիրճ պիտի ասենք՝ «Չի կարելի,» և պահենք ամանը պահարարում: Թողնել շաքարամանը սեղանի վրա կը նշանակէր սաստիկ գայթակղութեան ենթարկել երեխային, որ գեռ կիսով չափ է սովորել մեր կամքին հպատակել: Միայն այն ժամանակ պէտք է այդ անենք, երբ երեխան լաւ կը համոզւի որ մեր կամքը անդրդւելի է:

Այժմ սկսենք լնտելացնել երեխաներին որ փոքրիկ ծառայութիւններ մատուցանեն մեզ, բերեն կամ տանեն սեղան, ոտի աթոռիկ, զիբոք և այլն, աւելի քիչ ուշադրութիւն դարձնելով այն բանի պիտի այդ միջոցին նա որ և է գլաքառթեան հետ է. միթայն խիստ

7 / 11 1922



պիտի հսկենք որ տւած հրամանը անպայման կատարի: Եթէ այսպէս հետևաբար վարւելու լինենք. մեր հրամանն ու նրա կատարածութիւնը այնպէս սերտ կապերով կը շաղկապւեն իրար հետ երեխայի մտքի մէջ, ինչպէս շաղկապւում են պատճառն ու հետևանքը,—որպէս մի բնական անհրաժեշտութիւն:

Կամենալով երեխային ներշնչել մի այսպիսի հպատակութիւն մեր կամքին, չը պիտի չափազանց շատ հրամաններ տանք, չպիտի ի չար գործ դնենք հրամայիլու իրաւունքը, մանաւանդ երբ երեխան անմեղ փորձեր է անում իրերի հետ ծանօթանալու համար: Երբ օրինակ՝ նկատում ենք որ մատը կը լակին է մօտեցնում, չը պիտի արգելենք, որովհետև երեխան այդ անում է կրակը դիտելու համար և եթէ մէկ անզամ մատն այրի, էլ միւս անգամ երբէք չի մօտեցնի կրակին: Արգելքը միայն աւելի կը գրգռի նրան և աւելի կը գրդի մեզ կամքին հակառակելու:

Սյսպէս վարեկով մօտ երկու տարի, չորս տարեկան երեխային կը նտելացնենք անպայման հնազանդութեանը:

Չորս տարեկան երեխան ինչքան էլ գրգռւած և բարկացած լինի, պիտի մայրիկի հէնց առաջին կանչին մօտենայ և նայի նրա աչքերին: Այդ արդէն մեծ քայլ կը լինի նրա բնաւորութեան կրթութեան գործում, քանի որ մօր հայեացքը, յանդիմանող թէ յորդորող, երեխային ուշքի է բերում և ստիպում է մտածել և այդպիսով խիստ պատիմէներին դիմելու առաջն է առնումք Ով որ գիտէ թէ հրապիսի գառն և վասսակար հետքեր

ան թողնում պատիմէները երեխայի հոգու մէջ, կը հասկանայ թէ որչափ նպատակայարմար է և կարեռ անպայման հնազանդութեան ընտելացնել նրան:

Աւելի մեծ երեխայի հետ պէտք է ժամանակ առ ժամանակ հպատակութեան աւելի զժւար փորձեր անենք: Կարելի է նրան պատւիրել որ թողնի հետարբքրական զւարճութիւնը մեզ կամ ուրիշներին որ և է ծառայութիւն մատուցանելու համար: Եթէ երեխան առանց ծամածութեան, անտրտունջ կատարում է մեր պատւէրը, կարող ենք հաւատացած լինել որ արդէն իւրացըրել է մեր կամքին անմիջապէս և անյապաղ հպատակելու սովորութիւնը:

Վերևիշեցինք որ սկզբում երեխային հնազանդութեան մէջ վարժեցնելիս չը պիտի չափազանց շատ պահանջնք, այլ պիտի աչքի առաջ ունենանք թէ ինչ կարող է նա յօժարութեամբ կատարել: Յաճախ սակայն երեխան, հակառակ իր ցանկութեան, չի կարողանում հնազանդել մեզ և այս ակամայ անհնազանդութիւնը կարող է շատ հեշտ փոխւել դիտաւորեալ անհնազանդութեան:

Սյսպէս օրինակ՝ երբ մայրը կամենալով պարծենալ իր երեխայով՝ հրամայում է նրան ուրիշների ներկայութեամբ անգիր ոտանաւոր կամ իր անունը կամ որևէ այսպիսի մի բան ասել, կարող է պատահել որ երեխան՝ մեծ ընկերութիւնից շփոթւելով կամ այդ ըոպէին տրամադրւած չը լինելով, չը կարողանայ մօր խօսքին հնազանդել, որովհետև բերանում ձայնը կը տրւում է և ոչ մի կերպ չի կարողանում պահանջած

բառերը արտասանել, —այդ անհնազանդութիւնը ակառմայ է, այդպիսի պարագաներում պէտք է խոյս տալ պահանջելուց:

Վերջապէս շատ վնասակար է մշտական, անդադար վարժութիւնը կանոնաւոր և անշեղ ղեկավարութիւնը: Այս պակասութիւնը յատուկ է տարիքաւոր մարդկանց կամ նեարդայնացած մայրերին, որոնք սովոր են շարունակ փնթիվնթալու:

Անվերջ հրամանները, արգելքները, խրատներն և յորդորները այնպէս շփոթեցնում են երեխային, որ վերջի վերջոյ չի իմանում թէ ինչ է թոյլատըլի և ինչ ոչ, նա դառնում է կամ կամացուրկ և անբան մէկը կամ յամառ, իրասածի և անհնազանդ:

Առաջին թերութիւնը նկատում է աղջիկների մէջ, սրանք աւելի նկույն են, նեզ և մեղմաբարոյ, միւսը՝ տղաների մէջ, սրանք աւելի ուժեղ են և ի բնէ աւելի գործունեայ: Ինարկէ երեխան պիտի լինի ոչ թէ մի խաղալիք մեքենայ, որը այս կամ այն կողմն է թըռչկոտում թելին հնազանդելով, այլ մի բանական էակ, որ սեփական կամքը գործ է զնում որպէս իր, նոյնպէս և ընդհանուրի բարօրութեան համար, և հնազանդութիւնը ինչքան էլ այդ աստիճանի վրա դեռ անգիտակցական լինի, պիտի նախապատրաստի նրան ապագայում սեփական բանականութեանն ու խղճմտանքին հպատակւելու:

ԸՆՏԵԼԱՑՈՒՄ

Ի՞նչպէս սովորեցնել ժամանակին ուտել խմել քնել, բնական պէտքերը կատարել, հագնելու—Դիմացկութիւն:

Վերև ասածից արդէն տեսնում ենք թէ ինչ նշանաւոր գեր է խաղում կրթութեան մէջ ընտելացումը, բայց աւելի ևս կը հասկանանք նրա մեծ կարևորութիւնը, երբ կը մտաքերնենք որ կրթական այդ միջոցից կարելի է օգտակելուրիշ միջոցից առաջ, որովհետեւ կարելի է գործ գնել անմիջապէս, շատ վաղ, գըրեթէ երեխայի ծնւելու օրից,—այն ժամանակ, երբ ուրիշ կրթական միջոցները դեռ բոլորովին ապարդիւն են անցնում: Ճշմարիտ է բանականութեան օգնութեամբ ձեռք բերւած առանձնայատկութիւնները ժամանակով աւելի մեծ արժէք ունեն, աւելի են պատիւ բերում մարդկանց, քանիոր ապացոյց են բարոյական ուժի աւելի և աւելի ամրապնդելուն, բայց միշտ աւելի անփոփոխելի և հաստատ են այն առանձնայատկութիւնները, որ ձեռք են բերւած սովորութեան ձանապարհով: Աւելին կասենք. նոյն իսկ ամենազօրեղ ընաւորութիւն ունեցող մարդը իր սեփական կամքի օգնութեամբ երբէք չի իւրացնի այն առանձնայատկութիւնները, որ երեխան իւրացնում է առանց որևէ գժւարութեան: Այդ ձանապարհով դեռ ծծկեր մանուկը ընտելանում է կերակուր ուտելու կարգ ու կանոնին, իսկ աւելի մեծ երեխաները՝ մաքրասիրութեանը, չափաւորութեանը կեր ու խումի մէջ և այլն:

Կեանքի առաջին օրից պէտք է ընտելացնեք երեւային միայն յայտնի, նշանակւած ժամերին կերակուր ուտելու և գիշերը հանգիստ քնելու: Այս կանոնին ըստ կզրից և եթ հետեղ մայրը ոչ միայն կը թեթեացնի մայրութեան ծանր պարտականութիւնները, այլ և միառժամանակ երեխայի կրթութեան անխախտելի հիմքը կը դնի, որովհետև կը պահպանի նրան ազահութիւնից, կը սովորեցնի իսկական սովածութեան զգացմունքով դեկավարւելու: Այդպէս առաջնորդւած երեխան չափից աւելի չի ուտի, այլ միայն այնքան, որքան անհրաժեշտ է սովածութիւնը յագեցնելու համար: Երեխայի մեծանալովը՝ պէտք է աւելի սակաւ անզամ նրան կերակրել, մինչև որ վերջապէս կը համանենք կանոնաւոր թւին, մօտաւորապէս՝ օրեկան հինգ անգամին: Այս սկզբունքը խախտելով, ոչ թէ նշանակւած ժամերին, այլ մեծերի ցանկացած միջոցներին կերակուր տալով, մանուկին դարձնում ենք աղան և աչքածակ կդրդում ենք որ ուտի պահանջի անժամանակ, իսկ սրանից առաջանում է մարտողութեան անկանոնութիւն և տըկարութիւն:

Նոյնպէս առաջին օրւանից անհրաժեշտ է ընտելացնել երեխային՝ գիշերով առանց լոյսի քնելու: Գիշերւան լամպին սովոր երեխաները վերջը վախենում են մութ տեղ քնելուց: Երեխային օրօրեն ու ճօճելը, քնեցնելու ժամանակ վրան երգելը պապական ժամանակների անպէտք մնացորդներ են, և առանց այդ ամենի երեխաները շատ լաւ կարող են դիմանալ: Իրը թէ այդ ամենքը երեխաների աչքերին քուն է բերում,

բայց չէ որ օրօրելը երեխայի վրա պէտք է հէնց այնպէս ներգործի, ինչպէս օրինակ՝ ճօճանակը կամ նաւագնացութիւնը, որ շատ և շատ հասակաւորների վրա աւելի քան անախորժ է ներգործում: Օրօրելը միայն թմբեցնում է ծծկերին և այդ թմբութիւնիցն է, որ երեխան քում է, իսկ այնտեղ, որտեղ սովորութիւն չը կայ օրօրելու, երեխան առանց այդ էլ շատ աւելի շուտով է քուն մտնում: Երբ մտաքերում ենք թէ ինչպէս սաստիկ են օրօրում և ինչպէս աղմկալի ձայնով են երգում ծծմայրերը, կամենալով չը ննջող մանուկին քնեցնել, անկասկած առաջնութիւնը պիտի տանք անշարժ անկողնիկին և հանդարտ ննջելուն: Ննջող մանուկի լացն ու անհանգստութիւնը կարող են առաջ գալ բոլորովին ուրիշ պատճառից, կարող են բողոք լինել օրօրելու և երգելու դէմ կամ տկարութիւն կամ անյարմար փաթաթւածքի հետևանք:

Աւելի մեծ երեխաներին պէտք է մէկ անգամից ընտելացնել կողքի վրա պառկելու անկողնիկի մէջ՝ ձեռները վերմակի վրա դուրս պահելով: Այսպէս սովորած երեխան վերջը չի կարողանայ քնել ձեռները վերմակի տակ ունենալով, որովհետև արիւնի շրջանառութիւնը նրա շնչառութիւնը կը դժւարացնի: Իսկ եթէ երեխային սկսենք միայն հինգ տարեկան հասակից կամ աւելի ուշ ընտելացնել ձեռները այդպէս պահելու, նա անգիտակցօրէն քնի մէջ ձեռները չի տանի վերմակի տակ, իսկ յայտնի է թէ որչափ վկասակար հետևանքներ է ունենում այս սովորութիւնը աւելի ուշ երեխայի կեանքում և ինչպէս նոյն իսկ պատճառ է դառ-

նում շատ կորստաբեր արարմունքների,

Այստեղ պէտք է կանգ առնենք այն բանի վրա, որ մանուկները ակամայ յաճախ են թաց անում անկողնում: Աւելի ուշ մանուկը սկսում է տիրապետել իր միզամուղ մկաններին, ուստի մեծերի պարտականութիւնն է օդնել նրան, որ շուտով սովորի կառավարել այդ մկանները: Անփութութիւնը այս բանում երեխաների շատ ժանր է նստում, և յաճախ մինչև 9-ը—10-ը տարեկան հասակը ստիպւած են լինում յամառութեամբ մաքառել իրենց կամքին չենթարկող այդ մկանների դէմ, իսկ համապատասխան հսկողութիւնն ու ժամանակին ընտելացումը հէնց սկզբից այդ թերութեան առաջն կառնէր: Երեխային երեկոյեան քիչ խմեցնելով, հսկելով որ ընական պէտքերը կատարի քնելուց առաջ, դիշերուայ մէջ արթնացնելով — ահա ինչ միջոցներով կարող ենք այդ պակասութեան առաջ առնել: Այդ կողմից անխնամ թողած երեխաների վրա շատ էլ չեն ներգործում ամաշացնելն ու նոյն իսկ ամենախիստ պատիժները, այն ժամանակն էլ հարկաւոր կը լինի դիմել վերև յիշւած միջոցներին, բայց որովհետեւ մոռանալ առնասարակ աւելի դժւար է քան թէ ընտելանալը, ուստի այդ գէպքում բժշկութիւնը շատ աւելի երկար պիտի տես:

Յայտնի է թէ որչափ կարեոր է շարժողութիւնն ու թարմ օդը երիտասարդ սերունդի առողջութեան և աշխուժութեան համար. ուրեմն հէնց ամենավաղ հասակից պէտք է սովորեցնենք նրանց թարմ օդի մէջ մնալու: Թէև մենք հակամիտ չենք որ երեխաներին

ինչ էլ որ լինի, առանց այլկայլութեան դիմացկանութեան վարժեցնենք և խորհուրդ չենք տալիս զրօնելու դուրս տանել վոքրիկներին կամ մի քիչ մեծերին ձըմեռւայ բուքին, հիւսիսային ցուրտ քամուն կամ սաստիկ անձրկին, սակայն անհիմն ենք համարում երեխաներին տանը պահել քիչ թէ շատ տանելի, թէկուզ և ոչ այնքան էլ լաւ եղանակին:

Նոյնպէս հետզհետէ ընտելացնելով կարելի է երեխային մաքրասէր դարձնել: Պէտք է սովորութիւն անել որ քսելուց առաջ և անկողնից վեր կենալուց յետոյ անմիջապէս երեսը լւանայ, նոյնպէս լւացւի ճաշից առաջ և յետոյ և առհասարակ երբ ձեռներն կամ երեսը կեղառոտել է: Քանի աւելի շուտ երեխան ինքը կը կարողանայ այս ամենը անել, այնքան աւելի լաւ: Յամենայն դէպս արդէն հինգ տարեկան երեխան պիտի առանց ուրիշի օդնութեան կառավարւի. միայն թէ պէտք է նրան տալ հասակին համապատասխան լւացարան և սովորեցնել թէ ինչպէս պէտք է ինքը լւացւի: Մանուկներից շատ շատերի անշնորհքութիւնը լւացւելու մէջ առաջ է գալիս նրանից, որ մեծերը չափազանց են մտածում իրենց հանգստութեան մասին և գերադասում են իրենք լւանան երեխային, քան թէ նրա գլխին կանգնեն սովորեցնեն և հսկեն, որ ինչպէս հարկն է կատարի այս գործողութիւնը: Անկասկած, մեծերի համար այդ ամենից յարմար է, բայց երեխաներին ոչ մի օգուտ չի բերում:

Շատ վաղ նոյնպէս պէտք է երեխային սովորեցնենք կարգապահ լինելու, կարգին պահելու իր խաղալիք-

ները և վերջը՝ նաև իր շորերը։ Փոքրիկ մանուկը արդէն պէտք է ունենայ իր սեփական արկղը, պահարանը, կօմողը կամ որևէ անկին, որտեղ նա կարող է դարձել իր սեփական իրերը, այնպէս որ միշտ գիտենայ թէ որտեղ պէտք է դարսի։ Հէնց սկզբից այս կարգ ու կանոնին ընտելացած երեխաները վերջը շատ դժւար են ընտելանում կարգապահութիւնը ամեն մարդու համար սաստիկ կարեռ յատկութիւն է. ամենը լաւ են հասկանում որ այս յատկութիւնը շատ է թեթևացնում և կործացնում ամեն գործունէութիւն, և հասակաւոր մարդկանցից քանիսը ստիպւած են լինում միմիայն նրա համար մաքառել իրենց անկարգութեան դէմ, որ փոքրուց ընտելացան չեն եղել կարգապահութեանը։ Հնուց յայտնի է որ շառ բան է վաստակում նա, ով որ մէկ անդամից ընտելացնում է երեխաներին որ իրենց գործերի մէջ նոյն կանոններով զեկավարւեն, ինչ կանոններին որ իրանց ապագայ գործունէութեան օրէնքներն են լինելու. Որ այդպէս է, թող երեխաները ոչ մի այնպիսի սովորութիւն չիւրացնեն, որից պէտք է վերջը ետ կենան. Ուրեմն ազատենք նրանց ետ կենալու, այսինքն՝ այն պահասութիւններն և արատները մոռանուու դժւար գործից, որոնք զբեթէ նրանց երկրորդ բնութիւնն են գառնում։

«Ետենալով կենդանիներին մեղ ծառայելու ընտելացնել շատ վաղ ենք սկսում նրանց վարժեցնել Այս գէորգում շատ խելացի ենք վարւում. ապա ինչու ենք այս բանը արաւամարհում երեխաներին կըթելիս։ Չէ որ առաջարարակ առաջուց վշացնում ենք նրանց,

խարելով մեզ այնպիսի թէվնչչ ոո իրենք իրենց ժամանակով կուղղւեն և լաւ մարդ գուրս կը գան»։ Այսպէս էր ասում անգլիացի իմաստասէր Լոկլը զեռ երկու հարիւր տարի մեզանից առաջ, և սւաղ նրա խօսքերը մինչև հիմա էլ ունեն իրանց նշանակութիւնը։ Բայց եթէ ընտելացումը այդպիսի մեծ դեր է խաղում երեխայի կըթութեան գործում, ոչ պակաս կարեսր է օրինակը, քանի որ ամեն մարդուն իրնէ յատուկ է ձգտել ուրիշին հետևելու և ուրիշին նմանելու։

ՕՐԻՆԱԿ

Նմանելու ձգտումը—Մեր օրինակը,—Մէ երի օրինակը—Վաստօրինակի առաջն առնելու—Հասակակիցների ընկերութիւնը—Հըսկողութիւնը:

Վերե բերած յատկութիւնները պատւաստում ենք երեխաներին առանց օրինակ ծառայելու, բայց աւելի բարձր կարգի յատկութիւնները երբէք չենք ներշնչե երեխաներին, եթէ մենք ինքներս այդ բանում նրանց համար օրինակ չը ծառայենք, եթէ օրինակ՝ նոյն իսկ հազար անգամ կըկնելու լինենք մանուկին՝ «Ճայնդ չափազանց մի բարձրացրու, սիրալիր եղիր, ուղիղ նստիր, մի օրօրւիր աթոռի վրա, աղքատներին ողորմիր, և այլն և այլն» իսկ մանուկը տեսնի որ մինք ինքներս վարւում ենք մեր պատւէրների հակառակ, կարող ենք հաւատացած լինել որ մեր խօսքերը ոչ մի ազգեցութիւն

չեն անի նրա վրա: Թանձրացեալ օրինակը աւելի է առում մանկական հոգուն, քան թէ ամեն տեսակ խրատներ և դատողութիւններ, որոնք նրա համար միմիայն դատողութիւններ են և այլ ևս ոչինչ:

Ուրիշ կերպ էլ չի կարող լինել, քանի որ նման-
ւելու ձգտումը աւելի ուժեղ է երեխայի մէջ, քան թէ
բանականութիւնը և գեռ թոյլ կամքը: Ի՞նչպէս կարող
ենք պահանջիլ որ երեխան ուրիշ կերպ վարւի, քան
թէ մենք, որոնց հետ նա կապւած է սիրոյ և ակնա-
ծութեան կապերով, որոնց վրա նա նայում է որպէս
իրենից աւելի բարձր և աւելի կատարեալ էակների
վրա: Երեխայի համար սովորական և մարմացած օ-
րէնքը մեր վարւողութիւնն է:

Երեխան այնպէս ման կը գայ և կը շարժւի, այն-
պէս կը յօրանջի և փրշտայ, այնպէս բարձրածայն կամ
կամաց կը խօսի, ինչպէս մենք: Բայց այս գեռ բա-
ւական չէ. նա մեզ նման քաղաքավարի կամ կոպիտ
կը խօսի ծառաների և մեծերի հետ, հէնց այնպէս ողոր-
մած և կարեկից կը լինի աղքատներին և թշւառներին,
որպէս մայրն և դաստիարակները:

Ցոյց տանք որ ամեն տեսակէտից կատարեալ ըն-
տանիք ենք, որ մեր մէջ սիրուն ու բանականութիւնը
մի լիսկատար ներդաշնակութիւն են կազմում, որ ան-
ձնական շահը սերտ կապում ենք լայն մարդասիրու-
թեան հետ, որ գիտենք մարդկանց հետ վարւել, սիրա-
լիր, պատրաստակամ, անձնանւէր ու ընկերասէր լինել,
որ ազատ ենք հասարակական նախապաշտամունքներից,
— անկասկած երեխան էլ կը իւրացնի միկնոյն յատկու-

թիւններն և ձեռք չի բերի այն թերութիւնները, որոնք
անշուշտ բաժին պիտի դառնան այն երեխային, որ
մեծացել է մի այնպիսի ընտանիքում, ուր կարելի է
տեսնել միմիայն վերև բերած յատկութիւններին հա-
կառակ յատկութիւններ: Ամենայն իրաւամբ կարող
ենք ասել մանաւանդ մեր աչքի առաջ ունեցած հասա-
կի համար թէ՝ «ինչպէս որ ծնողներն են, այնպէս էլ
նրանց որդիքն են»:

Օրինակի զօրութիւնը նկատում է շրջապատող-
ների ամեն տեսակ ազդեցութիւնների մէջ: Այսպէս,
այն ընտանիքներում, որտեղ փոթորիկը մի բնական,
սովորական երեոյթ է համարւում, ոչ ահ, ոչ սար-
սակի է առաջացնում, երեխաները ոչ մի ուշադրութիւն
չեն դարձնում նրա վրա. ընդհակառակը՝ եթէ բնական
այդ երեոյթը անյաղթելի անհանգստութիւն է առաջ-
նում մայրիկի կամ տատիկի մէջ, ահն ու սարսափը
բռն են զնում երեխայի սրառում: Նոյն իսկ օտար
զաւակներ, այսինքն՝ այնպիսի ծնողների որդիք, որոնք
այդ նեարդային հիւանդութիւնը չունեն, ձեռք են բե-
րում այդ պախարակելի երկշուսութիւնը, եթէ մեծա-
նում են մի զերգաստանում, ուր վախճնում են փո-
թորկից: Ասել է թէ՝ «հատգին է օրինակի զօրութիւնը,
քանի որ նա կարողանում է փոփոխել, յեղաշրջել,
այլակերպել նոյն իսկ հարազատ ծնողներից ժառան-
գած յատկութիւնները»:

Նմանողութեան ձգտումը յատուկ է նաև ստո-
րին կարգի կենդանիներին, բայց ոչ մէկի մէջ նա այն
սատիճան խոր և լայնածաւալ չէ, ինչպէս մարդու մէջ:

մասամբ նմանողութիւն են մհծերի մտքերին ու գործերին, միայն թէ խաղի ձևով, ինչպէս մենք մի քիչ ներքեւ կը տեսնենք:

ՄՏՏՐԻ ԿՐԹ-ՌԽԹ-ԽԵՆԸ

Մտաւոր զարդացումը:—Զգայարանները:—Հմբանութիւնը:—Պատմութիւն, զբոցներ:—Նրանց ազդեցութիւնը:—Բնունակութիւնները:—Պատկերն և նկարները:—Բնութեան դիտողութիւնները:

Մանուկն աշխարհ է զալիս զեռ ոչ լիովին զարդացած, թէ փեղիքապէս և թէ հոգեպէս, և նրա գոյութեան ամբողջ առաջին տարին անընդհատ շարունակում է այդ զարդացումը: Նա ունենում է զգայարաններ, բայց այդ զգայարանները զեռ ընդունակ չեն բոլորովին պարզ և անխառն տպաւորութիւններ ստանալու շրջապատող աշխարհից: Ունենում է ձեռներ ու ոտներ, բայց պէտք է զեռ սովորի ձեռներով բռներ իսկ ոտներով ման գալ. ունենում է թոքեր և ամբողջ խօսակցական գործարան, բայց զեռ չի կարողանում խօսել: Նա զեռ չի ունենում բաւականին ոյժ այնքան ող ներշնչելու և արտաշնչելու, ինչքան որ հարկաւոր է հնչիւններ և բառեր արտասանելու համար, և այն էլ մտածներ ի՞նչ պիտի մեզ ասէր: Առաջին երեք շարաթները լսողութեան գործարանը մոլորովին անզգայ է, որովհետև ականջիթմբուկը հետզհետէ հորիզոնական ուղղութիւնից ընդունում է ուղղահայեաց ուղղութիւն: Մանուկի աչքերին բոլոր իրերը երեսում են կարծեա

միատեսակ հեռաւորութեան վրա, մէկ հարթանկարի պէս: Այդ պատճառով մանկական կեանքի առաջին օրերում ոչ մի խօսք չէ կարող լինել կրթութեան մասին. ծծկերի ամբողջ գործունէութիւնը սահմանափակում է միայն քննելով և սնունդ առնելով:

Այսպէս ուրեմն ծծկերի թոյլ միտքը այդ առաջին շրջանում շատ զանդաղ է զարգանում, և միայն այդ շրջանի վերջում զւարթ դէմքից և ուրախ հայեացքից նկատում է որ աւելի է հետաքրքրուում շրջապատող առարկաներով: Սակայն մանուկը դեռ գժւարութեամբ է զանազանում մէկ իրը միւսից, այդ է պատճառը, որ նա հետաքրքրութեամբ նայում է շարունակ միենոյն իրի վրա, որը նրա ուշքը զրաւել է, թէկուզ շատ անշգամ էլ տեսած լինի այդ իրը:

Երկրորդ տարին նրա մարփ զարդացումը աւելի է զանում նկատելի. այդ ժամանակ նա ոչ միայն աւելի հեշտութեամբ է իրերը ձանաչում, այլ և սկսում է որոշ եզրակցութիւններ անել: Ուրախանում է, երբ զլիխն զգակ են ծածկում կամ ասջեր զնում ենք փուփույով ամանը, որովհետև յիշում է թէ մինչև այդ միշտ այդ բաներից յետոյ նրան զրօնելու են դուրս տարել կամ կուշտ կերակրել են: Նրա եզրափակութիւնները միշտ ճիշտ չեն լինում. այսպէս օրինակ՝ տեսնելով խաղալիք-ձի, նրա դնչին մօտեցնում է զգալով կաթը, իսկ նկատելով որ կենդանի գառնուկին խոտ են տալիս, կանանչ խոտ է պոկում և դէմ է անում ձնձուկին, կարծելով որ ձնձուկն էլ գառնուկի պէս իր մօտ կը թռչի. բայց չը նայելով այս ամենին՝ նոյն իսկ այդ

Կրթական արհեստը գեռ չէ դուրս բերել այդ օրէնքից
այն բոլոր եղբափակութիւնները ուրուցից կարելի կը
լինէր օգուտ քաղել աճող սերունդը կատարելագործե-
լու համար:

Այսպէս ահա օրինակի օգնութեամբ երեխան
կրթւում է և նմանուում շրջապատող մարդկանց, զլիս-
տրապէս նիստ ու կացի, վարուղութեան կողմից: Բայց
շրջապատի օրինակը քիչ չէ աղջումնակ նրա մտաւոր
աշխարհի վրա: Զէ՞ որ այս հասակում մանուկը մտա-
ւորապէս զարգանալու աւելի շատ դրդիչներ է ստա-
նում իր հասակակիցներից, քանի որ աւելի հեշտ է
հասկանում նրանց գործողութիւններն ու զգացմունք-
ները, քան թէ հասակաւորների աւելի բարդ և բար-
ձագան գործունէութիւնը: Այդ է պատճառը որ փոքր
երեխանները սիրում են հետեւել մեծ երեխանների օրի-
նակին, որոնց մարմնի շարժումները աւելի հեշտ են
կարողանում մէկ ակնարկով ընդգրկել, իսկ մտքերն ու
զգացմունքները՝ աւելի հեշտ հասկանալ: Այդ է պատ-
ճառը՝ որ երեխանները աւելի շատ քան են սովորում
իրենց հասակակիցներից, քան թէ հասակաւոր մարդ-
կանցից, բայց և ամենամեծ զիւրութեամբ իրացնում
են նրանցից նաև ամեն տեսակ պակասութիւններ և
արատներ:

Առանձնակի մեծացած երեխանները աւելի դան-
դաղ են զարգանում մտաւորապէս, որովհետեւ նրանց
պակասում է գիտաւոր դրդիչը, այն է՛ հասակակիցնե-
րի օրինակը, որ նոյնքան անհրաժեշտ է նրանց հոգե-
կան զարգացման համար, որքան հացն ու ջուրը, որ-

քան օդն ու շարժողութիւնը նրանց առողջութեան և
ֆիզիքական աճման համար: Դրանից է որ մինութար
կամ ընտանիքի ուրիշ երեխաններից շատ տեելի մեծ զա-
ւակի կրթութիւնը յաճախ միակողմանի է լինում: Ծը-
նողները, նոյն իսկ ամենալաւ ծնողները չեն լցնի՝ ինչքան
էլ սիրեն և զուրգութեն որդուն, այն բազմաթիւ հոգիկան
վայելքների և բազմակողմանի գրդիչների տեղը,
որոնք երեխայի միտքն ու կամքն են կազմակերպում և
կատարելագործում և որոնք ստացւում են միմիայն
հասակակիցների ընկերութիւնից: Ուրեմն՝ իրենց երե-
խայի մտաւոր զարգացման մասին հոգ տանող ծնող-
ները պէտք է նրան ժամանակ առ ժամանակ մացնեն
հասակակիցների ընկերութեան մէջ, որէտք է մի կողմ
թողնեն դասակարգային նախապաշարմունքները և
պէտք է թոյլ տան իրենց երեխաններին շփւել ու խո-
ղալ նոյն իսկ հասարակական գոտակարգութեան մէջ
ցածր կանգնած ընտանիքի երեխայի հետ:

Ի հարկէ այս բանը նրանք կարող են անել հա-
մապատասխան հսկողութիւն ստումաններով, չը վախե-
նալով որ երեխան կը փչանայ, որովհետեւ աղքատ
դասակարգի երեխանները այդ հասակում գեռ փչացած և
ընկած չեն լինում: Այս ճանապարհով երեխան մանկա-
կան օրերից սրտից կը վանի հստկանութեան սալմերը:
Այս բանից ահագին բարոյական օգուտ է ստանալու
նա, բայց և ոչ պակաս մտաւոր օգուտ: Հասակակից-
ների ընկերութեան մէջ երեխան բոլորովին իր ընա-
կան տարերքի մէջ է, որովհետեւ մանկական աշխարհը
մի առանձին աշխարհ է, նրա մտքերն ու զործերը մեծ

սխալները վկայում են՝ որ նրա մտաւոր գործունէութիւնը զարթնել է:

Յաջորդ տարիներում մտաւոր առաջադիմութիւնը ընթանում է արդէն անընդհատ, և նոյն իսկ արած սխալները նպաստում են մանկական մտքի աւելի կատարելագործելուն:

Քանի որ երեխան չէր խօսում, չենք կարողանում նրա մտաւոր զարգացումը ստուգել, և թէս զրանից առաջ էլ արդէն նա ծանօթ է լինում շատ մարդկանց և իրերի հետ, այնուամենայնիւ խօսել սովորելուց յետոյ միայն արագ քայլերով սկսում է մտաւորապէս առաջ գնալ: Անա այդ միջոցին մեծերի չափաւորւած և խելացի միջամտութիւնը կարող է շատ նպաստաւոր լինել մանկական բանականութեան աւելի արագ զարգացման համար:

Դրա համար առանձին ցուցմունքներ և խրատներ պէտք չեն, քանի որ առանց այդ էլ սովորական ընտանեկան դաստիրակութիւնը բաւարարութիւն է տալիս այս կողմից ամեն պահանջներին: Մայրը կամ դայեակը մանուկին զրաղեցնելիս և նրա մէջ հնազանդութիւնը վարժեցնելիս՝ պատիրում է նրան բերել և տանել զանազան իրեր և տալիս է այդ իրերի անունները: Բայց որովհետեւ երեխան դեռ զանազանում է իրի ոչ թէ բոլոր յատկութիւնները, այլ միայն մի քանիսը, ուստի մայրը՝ իրի անունը տալիս, աստիճանաբար է աւելացնում նրա այս կամ այն առանձնայատկութիւնը, ոկզրում հրամայում է բերել զնդակ, ափսէ, սայլակ, մատնոց և այնի, յետոյ արդէն մի քանի յատկու-

թիւններ է աւելացնում այս անունների վրա և պատիրում է բերել կարմիր գնդակը, փայտէ ձին, սպիտակ մատնոցը, այսպիսով ընտրում է նոր և նոր անձնայատկութիւններ և աստիճանաբար աւելացնում է հների վրա, մանուկի ուշագրութիւնը զարձնելով կը սպիտակ ափսէի, կարմիր փափլիկ գընդակի, գեղին կաւէ կուժի վրա և այն: Այսպէս խօսելով և խաղալով մեծերի հետ՝ մանուկը հարկագրւած է լինում նոր և նոր, առաջ չը նկատւած առանձնայատկութիւններ գանելու:

Բացի զրանից, մանկական մտքի առաջադիմութեանը զարկ տևող ամենակարևոր միջոցներից մէկն են խաղալիքները (աես ներքի):

Վաղուց արդէն նկատւած է որ մեծերի ընկերութեան մէջ լինող երեխանները աւելի արագ են զարգանում, քան իրենք իրենց կամքին թողածները, իսկ վերեւում արդէն յիշեցինք որ հասակակիցների ընկերութիւնը ոչինչով չի կարելի փոխարինել, առել է թէ երկու պայմաններն էլ պէտք է միշտ աչքի առաջ ունենալ: Ուղիղ է՝ մէկ տարեկան մանուկը աւելի է հակած լինում ուների, քան թէ իր նման փոքրերի հետ մնալու — այս առաջ է գալիս անշուշտ անօգնականութեան զգացմունքից, — այնուամենայնիւ նա էլ ուրախառը ժպտում է, երբ տեսնում է իր նման փոքրեկին: Այս անտարբերութիւնը գէպի հասակակիցները տեսում է մօտաւորապէս մինչև երրորդ կամ չորրորդ տարւայ վերջը: Այն ընտանիքներում, ուր աւելի շատ երեխաններ կամ՝ տարիքով իլարեց քիչ զանազանող, այս

համակրութիւնը դէպի հասակիցները աւելի վաղ է դարձնում:

Բացի մեծերի հետ խաղալուց և խօսելուց և բացի հասակակիցների ընկերութիւնից, մանուկների մտաւոր զարգացման համար ոչ պակաս խթան են հանդիպանում պատմութիւններն ու զրոյցները: Մանկական արթնացող երեակայութիւնը օրէց օր աւելի մնունդ է պահանջում, և այդ է պատճառը, որ երեխանները այնպիսի հետաքրքրութեամբ ականջ են դնում մեծերին: Զօդուել այդ միջոցից, չը պատմել մանուկներին հետաքրքրաշարժ զրոյցներ և պատմութիւններ — կը նշանակէր՝ հրաժարել կրթական ամենակարևոր դորձօններից մէկից: Բայց պէտք է չըմոռանաք որ վատ արհետաւորը նոյն իսկ լաւագոյն գործիքով ոչ մի օրինակելի բան գլուխ չի բերի:

Որպէս զի պատմութիւնը կամ հէքիաթը ընդարձակի երեխայի մտաւոր շրջանայեացողութիւնը, զարդացնի նրա սիրտը և կանոնաւորի երեակալութիւնը, որ առանց այն էլ սիրում է ցնորքներ և հրաշքներ, նա պէտք է իրական կեանքը նկարագրի և մի լաւ խըստական և հետաքրքրաշարժ պատմութեան բոլոր առանձնայատկութիւնները ունենայ: Թող երբէք երեխան այդ հասակում չըլսի մարդագէների, ալքերի, չար կախարդների, քաջքերի, նախարբիստոնէական ժամանակների այս ստեղծագործութիւնների մասին, որովհետեւ դրանք — մի կողմ թողնենք այդպիսի հէքիաթների յաձախ անբարարոյական կամ անմիտ բովանդակութիւնը — մանուկի մէջ առաջացնում են սնահաւատութիւն, եր-

կը չոտութիւն, նախապաշարմունք, թուլացնում են իրական աշխարհը ձանաչելու ձգտումը և ընտելացնում են երեակայութիւնը կիսաերազական ցնորքների մէջ ապրելու: ԶԵ որ առանց այդ էլ մանկական երեակայութիւնը, ինչպէս առաջ առել ենք, մտաւոր ամենաազործունեայ կարողութիւններից մէկն է. աւելի գըրգուել և արթնացնել նրան — կրակի վրա իւղ ածել կը լինէր:

Այդ կարողութիւնը կանոնաւոր գործադրութիւն կստանայ մանկական խաղերի մէջ:

Եւ վերջապէս՝ միթէ իրական աշխարհը, որը դեռ այնչափ անծանօթ է երեխային, չի կարող հետաքրքրել և գրաւել նրա ամբողջ ուշադրութիւնը: Մէկ աչք ձգեցէք օրինակ՝ մանապարհորդական նկարագրութիւնների մէջ, և լիբածեռն կը կարողանաք հանել այնտեղից հետաքրքրաշարժ, գրաւիչ և խրատական նիւթեր:

Սրա մէջն են ամեն մանկական պատմութեան արժանաւորութիւնները:

Բայց այդ զենք բաւական չէ. եթէ պատմութիւնը պիտի իրօք համապատասխանի իր նպատակին, պէտք է և համապատասխան անպաճոյն ձև ունենայ, առանց այն արհեստական ոճաբանութեան, որը միայն դժւարացնում է բովանդակութեան հասկանալը: Այս կողմից պէտք է զաս առնել զիւղական, շինական հէքիաթներից: «Կար չը կար» մի հարուստ մարդ կար. նա ունէր երեք որդի, մէկը բարի, միւս երկուսը չար և այլն»: Ամենալաւ հէքիաթները պէտք է պատմել երեխաներին պարզ, հասկանալի, բովանդա-

կալից բառերով, առանց ձոռոմարանական զարգարանքների: Եւ էլ շատ երկար չը պիտի լինեն, որպէս զի չը յոգնեցնեն մանուկին:

Հետզհետէ կարելի է աւելի երկարացնել և աւելի բարդացնել բովանդակութիւնը. բայց որքան կարելի է՝ պէտք է խոյս տալ գրքից պատմութիւններ կարդալուց, այլ աշխատելու է պատմել բերանացի, կենդանի խօսքերով, որոնք աւելի պայծառ և աւելի խոր տպաւրութիւն են թողնում մանուկի մտքի մէջ:

Այդ պատմութիւնները թւով շատ չը պէտք է լինեն, և նոյն իսկ սխալւած կը լինէր նա, ով որ ամբողջ տարւայ ընթացքում ամեն օր նոր և նոր պատմութիւններ կը պատմէր երեխային: Երեխանները միենոյն, գուցէ նոյն իսկ աւելի մեծ հետաքրքութեամբ ականջ են գնում թէկուզ տասն անգամ լսած հէքիաթին և զրոյցին և խկոյն ուղղում են, եթէ պատմողն որևէ է իշխաց յայտնի մանրամասնութիւնը սխալմամբ ուրիշ կերպ է պատմում կամ որևէ դէպք բաց է թողնում:

Լաւ է նոր զրոյց պատմելուց առաջ հարց ու փորձով ստուգել, թէ արգեօք երեխան հասկացել է նախորդ պատմութիւնը, միայն թէ չը պէտք է զեռ այդ հասակում պահանջել ճիշտ և մանրամասն պատասխան: Թող մանուկը կրկնի իր լսած պատմութիւնը մէկ, շատ շատ երկու անգամ, միւս օրը թող նոյնը անի. երեք կամ չորս օր այսպէս կրկնելուց յետոյ երեխան արդէն ինքը կը խնդրի որ թոյլ տաք՝ ինքը ասի սիրած ոտանաւորը, զրոյցը և այլն:

Մայրերից շատերը, չափազանցրած գաղափար ու-

նենալով իրենց երեխանների ընդունակութեան մասին, չեն կարողանում համբերել, մինչև որ գայ գրել-կարգալ սովորելու խոկական ժամանակը, և յաձախ դեռ վեցերորդ տարին չը լրացած սկսում են զիր սովորեցնել. շատերն էլ ահազին ճիգ են թափում սովորեցնելու թէ ինչպէս է ֆրանսերէն կամ գերմաններէն այս կամ այն իրի անունը: Եթէ ի նկատի անենք թէ ուրախութեան և զւարձութեան որքան բոլոշներ են իրուր խլում երեխաններից այդ չափազանց երկլայիլի գիտութեան համար, որքան դառնութիւն են տանում թէ երեխան և թէ մայրը, այնպայման՝ այդ պարապմունքը պիտի վաղաժամ և վասակար ճանաչենք՝ մանուկի յետագայ զարգացման համար: Ամեն բան իր ժամանակին ունի ու իր յատուկ պայմանները:

Մանկական միտքը կրթող միջոցներից մէկն են պատկերն ու նկարները: Դեռ ևս փոքրիկ երեխայի մէջ նկատում է պատկերների սէրը, երբ նա մատիտով թղթի վրա կամ քարեզչով քարետախասակի վրա զըծում է ամբողջ նկարներ և ինքն էլ հրձւում է իր մատների շնորհից: Երեխանների ձեռքը սովորաբար տրւող պատկերներն ու պատկերազարդ զրքերը շատ ել չեն նպաստում նրանց մտաւոր զարգացման, այլ աւելի շուտ արգելք են հանդիսանում այդ բանին, քանի որ ընտելացնում են նրան ցրւած լինելու: Այդ նկարներն ու գրքերը առհասարակ այն պակասութիւնն են ունենում, որ մէկ անգամից պատկերացնում են չափազանց շատ իրեր, որոնք ցրւում են երեխայի ուշաղրութիւնը: Երեխան ինչպէս հարկն է ոչ մէկը չի դնում, ոչ մի-

բան լաւ չի ըմբռնում ու նոր և նոր ապաւորութիւնների ետեից ընկած՝ արագ անցնում է մէկ պատկերից միւսին։ Նա դեռ ոչ մի գաղափար չունի հետանկարի մասին և տեսնում է օրինակ՝ երբեմն պատկերի տաջեկի շարքում նկարւած շատ աւելի մեծ մարդ, քան թէ ետեկի շարքում նկարւած տնակն է, որը պէտք է նրա համար իբրև բնակարան ծառայի։

Այսպիսի սխալ և թերի հասկացողութիւններ կարող է ստանալ երեխան նոյն իսկ լաւ նկարւած, բայց վատ զասաւորւած պատկերից — էլ չենք ասում վատ նկարւածների մասին, որոնք ոչ մի համաչափութիւն չեն պահպանում առարկաների մէջ, օրինակ՝ ջայլամը ներկայացնում են նոյն մեծութեամբ, ինչպէս և արագաղը, իսկ արջը ներկում են նոյն գոյնով, որով և գայլը։

Այնուամենայնիւ ինչպէս հարկն է գործազրւած պատկերներն ու նկարները կարող են նպաստել մտաւոր զարգացմանը։ Յայտնի է որ երեխանները երբեմն դժւարութեամբ են դիտում իրական առարկաները։ Այն երեխան, որը օրինակ՝ դիտում է մի բարձր տուն, ընդուրձակ շինութիւն, գեղեցիկ ձի, պէտք է իր հայեացքը ուղղի մէկ վերև, մէկ ներքև, գարճուի մէկ աջ, մէկ ձախ, շրջեցնի առարկայի եզրներով, մինչ դեռ պատկերի վրա նա կարծեն մէկ ակնարկով ընդգրկում է առարկայի բոլոր կողմիրը, — ահա թէ ինչու երեխանները այնպիսի սիրով են նայում պատկերները։

Ուրեմն որպէս զի մի կողմից բաւարարութիւն տված լինենք երեխայի սիրոյն դէպի պատկերները, և

միւս կողմից՝ պատկերները դարձրած լինենք մտաւոր զարգացման միջոց, երեխաններին պէտք է տանք այնպիսի նկարներ, որոնք մէկ որոշ առարկայ են ներկայացնում, բացատրենք երեխային, նրա ուշադրութիւնը դարձնենք առարկայի այս կամ այն առանձնայատկութեան վրա, մի խօսքով՝ պէտք է աշխատենք, որ երեխան չը բաւականանայ անմիտ զննութեամբ, այլ ձգտի հասկանալ և առարկան։ Եւ որքան աւելի ճշշգրիտ և իրականութեան հաւատարիմ պատկեր կը տանք երեխանների ձեռքը, այնքան աւելի լաւ։

Սակայն մտաւոր կրթութեան ամենակարենը միջոցներից մէկը կը լինի միշտ հՀնց բնութեան դիտութիւնը, և այս նպատակի համար պէտք է օգուտ քաղենք զրօսանքներից, որ տեղի պիտի ունենան թէ ամառ և թէ ձմեռ ժամանակ, պէտք է երեխայի ուշադրութիւնը զաձնենք այս կամ այն մանրամանսւթեան վրա, որպէսզի նրա դիտողութիւնը լարւած լինի, աւելորդ չի լինի ժամանակ առ ժամանակ հարցնել, թէ ինչ է տեսել, և այս մեր հետաքրքրութիւնը դէպի նրա տեսածը պիտի աւելի ևս խրախուսի նրան ուշադրութեամբ վերաբերելու շրջապատող իրերին։

Այս տեսակէտով պէտք է օգտւենք ամեն մի յարմար առիթից և պահանջենք որ երեխան կարձառօտ պատմի մեզ թէ ինչ է տեսել զրօսանքի, ճանապարհորդութեան կամ հարեւաններին այցելած ժամանակ։ Այսպիսի երեխան կը սովորի սեփական աչքերով դիտալ և սեփական գլխով մտածել։

ԽԱՂԱՅՐԸ

Ծծկերի խաղերը:—Աւագ, տիկիններ, ուրիշ խաղալիքներ:—Կաղապարումը, խաղալիքների և խաղի նպատակը:—Ի՞նչպէս ընտեղացնել աշխատանքի:

Ուրախութիւնը կարծես մի հոգեկան մթնոլորտ է, որի մէջ աճում են ամեն տեսակ բարի յատկութիւններ: Ուրեմն պէտք է աշխատենք մանկական հոգին պահել այդ բարերար տրամադրութեան մէջ: Բայց ուրախութիւնը, թէ հասակաւորների և թէ մանուկների կեանքում, կախւած է գործունէութիւնից, որը ուրախութեան հովանին է, իսկ անգործունէութիւնը նրա թշնամին է: Ծծկեր մանուկը՝ հետեւով գործունէութեան բնածին ձգուումին, արդէն օրօրցում ձգում, շարժում է ոտիկները, ձեռները, ձայներ է հանում, ականջ է դնում իր հաշիւններին, ըլլացնում է, նայում է երկար այս կամ այն առարկային,—վառող մոմին, ծաղկին, գնդակին, ժամացոյցի ճօճանակին,—և ամեն բան նրան յափշտակում է, ամեն բան զբաղեցնում է: Իսկ երբ կը սովորի ձեռքով բանել, նա առնում է ամեն առարկայ, որ իր ձեռքն են դնում, և եթէ կարողանում է՝ բերանն է տանում, մասամբ դուրս եկող ատամների պահանջներին բաւարարութիւն տալու, մասամբ էլ այդ առարկայի հետ աւելի լաւ ծանօթանալու համար:

Արդէն առաջին տարւայ վերջում կանոնաւոր զարդացած երեխան ժամերով զբաղւում է իր անկողնիկի

վրա դրւած խաղալիքները դիտելով: Բայց հէնց որ սկսում է ման դալ, նրա ամենամեծ զարբութիւնն է դէս ու դէս շպրտել խաղալիքները, այդ բանը նրան ահազին ուրախութիւնն է՝ պատճառում, ուրովինու նահամուում է իր ուժի մէջ:

Հետեւնք երեխանին, որը՝ ատանին նստած իր խաղալիքների հետ է ընկած, նա մէկ առարկան միւսի հոգից վերցնում է, ձեռք է քսում վրան, շօշափում է, կարծես կամենում է տեղի լաւ հասկանուի, և ապա մի կողմն է շպրտում, մէկ ուրիշը առնում, որի հետ նոյն տեսակ է վարւում: յետոյ մէկ էլ սողում է դէպի առաջին առարկան, և այն, և այն: Նրա դէմքի լուրջ արտայատութիւնը ցոյց է տալիս, որ արդէն Ֆի ինչ որ միտք սկսել է զբաղեցնել նրա ուղեղը: Ուրախ տրամադրութեան: մէջ (որ սովորաբար տեղի է ունենում երեկոները, եղբ սենենկում հրապ են վառում), երեխան գայեակի զրկում ոտնելին ու ձեռները ձգչում է, վերցել է ժայռում, և կենդանական ուժի շատութիւնից գետին է շպրտում, ինչ որ ձեռքն է ընկնուա, և քանի տեղի հետո է շպրտում, այնքան աւելի է ուրախանում: Այստեղ խաղը դառնում է երբեմն շմահանութիւն, բայց նեսումը, որ այդ հասակի մանկական խաղի գլխաւոր ընաւորութիւնն է կազմում, արդէն մզգանապատկիր է բազմաթիւ խաղերի, որ յատուկ են յաջորդի, աւելի մեծ հասակին: Եւ իրաւ, ինչ է գնդակի, չլիկի խաղը, նոյն իսկ մանկական հրացանաձգութիւնը, եթէ ոչ նետում:

Բացի նետումից, երեխաններին ամենամեծ վայելք են պատճառում այնպիսի իրեր, որոնք հեշտ են իրենց

ձեզ փոփոխում, օրինակ՝ թուղթը, աւազը, նոյն իսկ ջուրը։ Ծալելով թուղթը, տալով նրան տարբեր, երբեմն նոյն իսկ անձունի ձեեր, երեխան նոյնպէս համոզում է իր ուժեղ լինելու մէջ. այդ պատճառով է, որ նա նոյնպէս սիրում է չփշփացնել ջրի մէջ, քանի որ այս նիւթը աւելի քիչ ջանք է պահանջում նրանից։

Սակայն մանուկների համար, մինչև երեք տարեկան հասակը, ամենալաւ նիւթն է աւազը։ Աւազից՝ բաժակի, գաւաթի, տուփի օգնութեամբ երեխան կարողանում է շնորհ ամեն տեսակ ձեեր, և հասկայողութիւն է կազմում մեծութեան և փոքրութեան, բարձրութիւնների և ցածրութիւնների մասին և այն. ձեռքի մի հարւածով կարող է ոչնչացնել և հաւասարեցնել դիզած սարեցն ու նորից դիզել։ Ուրեմն նետումից յետոյ, փոքրերի ամենասիրած զբաղմունքն է շինածը քանդել Նրանց աւելի է զւարճացնում՝ դոյշեակի ձեռքով ահազին հմտութեամբ և համբերութեամբ շինած թղթէ խաղատնակէ մէկ անգամից ցրիւ անելը, քան թէ նայել թէ ինչպէս է կամաց-կամաց շինուում այդ տնակը և նրանց աւելի զւարճացնում է, աղիւսակներից կառուցւած պալատի քանդելը, քան թէ ինքը պալատը։

Երեխան միայն այն ժամանակն է սկսում կառուցանելով զւարճանալ, երբ կարողանում է ինքը կառուցանել։ Նորից չոր աւազը նրա ձեռքին դառնում է և կաթ, և ջուր, և ամեն տեսակ կերակուր, որով նա լցնում է իր ամանները, ափաէնները, պնակները, տակառները և մեծարում է իր հիւրերին, իր տիկիննե-

րին։ Այս նիստը հույց համարւում է ամենազարմարը փոքր մանուկների համար, բայց չը նայած այդ բանին շատ ընտանիքներում արդեւում են մանուկներին աւազով խաղալ, վախենալով այն անկարգութիւնից, որ այդ զարձութիւնը առաջ է բերում տան մէջ։ Այս առարկութիւնը հիմնաւոր չէ, որդիկետեւ նախ մենք պէտք է աշքի առաջ անհնակ մանակի հոգեկան ուղարկութիւնը, վերջապէս՝ տեղաւորելով առաջ առափակ և ընդարձակ արկղի մէջ կը կարողանայինք յայտնի չափով այդ անկարգութեան առաջն ասեել երեխան գիտէ ժամերով զբաղւել աւազով ասանց կողմանակի օգնութեան, և ով որ հասկանում է որ ինքնուրոյն զարձութիւնը նոյնքան մեծ նշանակութիւն ունի, որքան և ինքնուրոյն աշխատանքը աւելի ուշ հասկում, նա մատերի մըջով կը նայի այն փոքրիկ անյարձարքիններին, որ ուրիշ զարձութիւնից առաջ մն բավիր։

Հէնց որ երեխան վարժել է մոն զարու, նորու պէտք է առաջ անսպիսի խոպանիքներ, որուն երկար արկազրում են աւելից շարժել և մշտական զարձունքութեան մէջ են գնում նրան։ — ուրեմն զնզակը, ձին, փայտէ կապքը այդ ժամանակ մրանզանայն համալատականն իսպանացիներ են։ Կտորով փարփիկը տեղափոխում է իր սիփուկնաւթիւնը սենեկի մէկ անկիւնից մքոր և մեծ ճանապարհորդութիւններ և կատարում սիզմի և աթոռների շարքը։ Այս պէտքում առաջ նորից անսպիրելի ազրանքն է հանդիսանում երեխան աւազը ածում է պարկերի մէջ, բարձում է իր սալակը և նո-

րից վայր բերում, զնում է իր տիկինների հետ այցելու թեամ, երկար և դժւար ճանապարհորդութիւնից ցիսոյ գերազանում է տուն և այլն: Այս խաղալիքները միաւ տեսակ զբաղեցնում են՝ թէ տղաներին և թէ աղջիկներին, միայն աղջիկները գերազանում են աւելի տիկիններ, իսկ տղաները ձիեր: Տիկինը քսյրիկի աչքում բոլորովին նոյն տեղն է բռնում, ինչ որ եղրօր աչքում ձին: Զին աքացի է աւլիս, զժութիւն է անում, պահանջում է, որ իրեն շոյեն, սպառնան կամ խնզրեն, նոյնպէս և տիկինը միշտ չի հասղանգուում քսյրիկի ճրամանին, հարկաւոր է լինում նրան յիշեցնել, պատժել, խնամել և այլն, և թէ մեկին, թէ միւսին՝ պէտք է կերակրել նըւմացնել և հանգիստ տալ: Այսպէս երեք աշխարը խաղալով, սնդարձակում, պարզում և աւելի տմբապնշում են իրենց հասկացողութիւնների շոշանը, այսպէս՝ խաղը գործ է տալիս մտաւոր կարդղութեամներ, այսինքն՝ վարժ ցնում է մտաւոր ենուրը:

Մյուսումնէց, աշղէն հարաւարութ' տական աշկուիկն էր աղիւսակներով էլ չի լինի աշա համար լոկ փոյտէ կտորների հաւաքածու, այլ կը զառնայ մի ցանկալի նիմ, որի օկնութեամբ նա կտիսի կառուցանել տներ և սլաւաններ, շինել կամուրջներ և զրգել թմբեր, այժմ հասած կը լինի այն բոլին, երբ կարելի կը լինի երեխայի ձեռօղ տալ մրգորելի նւերներից մեկը, կամ միւսը: Միւսինների (մողայիկների) տուփից նա կրկազմի զանազան զարգեց և հասկացողթին կը ստանայ զոյների և անձանօթ ձեռքի մտսիս:

Չողիկներից կը կաղմի բառակուսիներ, աստղեր,

անսակներ, իսկ սիսեսի կրամ չաղանակի կոտրների օգնութեամբ կը չինի ոթոսներ, սեղաններ, մահճակալներ: Մասուկը կուսի ճիւսի զորպեր զոյնպղուն թղթից, իսկ հասարակ թղթից չինել տուփ, խկոյկ, ծիտ և այլն:

Շատ ցանկալի է նայնպէս որ երեխանները բնդօրինակն առարկաներ լինակոնից, որին էլ ծիւն ըլլաշնակի, չնիկ, կատուիկ: Այս նապատակի համար ամենայարմարն է կարը, որանից նա կարող է ահաւին օպուտ սամանակ, ընտելանարով ինչպէս հարդի է դիմուկ և զննել սառարկանները: Զի՞ որ ցանկանալով թռչնակ կամ չնիկ ծեփել ըստ տւած օրինակի՝ նա ստիպւած պիտի շինի ուշագրութիւն գարձնել այդ սառարկանների բոլոր յակութիւնների վրա:

Ցույօքելիան մահկապարտէզներէ խաղերէց *): մնիք ոյսուամբ բաց ենք թուզում բարձ ծակծելիք և որից այս տեսանկանը ըլլ, որմն որոշակ չու եւ անպատճեն ուսանո՞ի լուրում բայց զայ մարտիրուն յանձնարարում է՞ք յանու, որ թերեւոյ կուրելը նու պահէ թրդիքի վրա և յառաջ անպատճեն զանուած է աշխատանք, իսկ որովհետի այս երկու տեսակ զբաղմունքների մէջ գիշութ ու տարբէ ըստ թիւնը այն է, որ խաղը մի զործողութիւն է առանց որեւէ կողմնակի նոյսուակի, իսկ աշխատանքը միշտ ունենում

*) Ըստ «Մանկական պարուզ» թ., Արևուբեան-Երկարաբաղութիւն, 1905 թ., Թիֆլիս:

և որևէ որոշ նպատակ աչքի առաջ, ուստի պէտք է աշխատել որ երեխան համահայ թէ ինչի համար պէտք կը զայ իր ձեռքով շինած իրը: Ուղիղ է, վերև յիշւած միքանի գրադաւոնքներից չի կարելի գործնական օգուտ քաղել, քանի որ օրինակ՝ գարսոււած ձողիկները, մօզաւիկները կամ աղիւակներից կառուցած տունը վերջ է վերջոյ պէտք է երեխան ցրի կամ քանդի և նիւթը նորից գործածի մի ուրիշ խաղի համար, առել է թէ՝ խաղի արդիւնքը պէտք է ոչնչանայ: Բայց այնաեղ, որտեղ մանկական աշխատանքից կարելի կը լինի որևէ օգուտ քաղել, ձեռքից բաց չը թողնենք և այդ օգուտը քաղենք: Ուրեմն հէնց որ երեխան հմտութիւն ձեռք կը բերի, կը կարողանայ վարժ ծալն թուղթը, ասենք նրան թէ հարկաւոր է շինել մի տուփ խոհանոցում տղ պահելու համար: յակ եթէ նա արդէն լաւ կարել գիտէ գունաւոր թելերով, թող աշխատի յամի շուռամփոփ կարել, կամ մի յապաւէ՞՛, ոչքի կարգայած երեսը չը կորցնելու համար, կամ մաշիկ ժամացոյցի համար, որ պիտի նւիրւի մայբէ՛լին կամ հայրէկին, ծննդեան օրը,—և անկասկած երեխան աւել մեծ եռանդով և աշխատասիրութեամբ կը ջանայ զլուխ բերել իր գործը:—

Նաստիքակի մասնակցութիւնը խաղի մէջ:— Խաղալիքների շատութիւնը:— Խաղերի տեսակները:— Նմանողաթիւնը:— Օրինակը:— Երեխայի ինքնուրեյն աշխատովագութիւնները:

Այժմ հարց է ծագում թէ ինչպէս պէտք է իրենց պահեն զատախորանիները մասնակուն խանութիւնը կատամամբ: Այս հարցին միայն մի հակիրճ պատասխան ու նենք, —որչափ կարելի է ձեռնապահ, ոչ ներգործական կերպով: Յանի որ մեր զինաւոր նպաւուկը այս ամբողջ շրջանում պէտք է լինի այն, որ երեխան սովորի ինքը խաղալ, ուստի մեր միջամտութիւնը այն ժամանակ միայն տեղին կը լինի, երբ երեխան արդէն չը զիսէ թէ ինչ պէտք է անի իր խաղութիքի չետ, երբ ձանձրացելէն չէ: կարողանում որն է օգուտ քաղելնը անհիշ: Սմէն մի ուղիւնայ, նայն իսկ դեռ հույս զիմանցորդ, ինքն իր ժամանութ զարձնում է, իսկ ունի ոչ ոչ ժամանակած, երկար յամանակ ինքը զրագութ է իր խաղութիւնուն: Այն երեխան, որին մըջու ուժինութ էն հապահում, զատաւում է վեցը անոցնուկաւ, նշայիւ այն՝ առկի միծ, երեխանները, որոնց շարումակ ուրիշներն են օգուտ գաներ սովուելու մէջ: Իշտկառակ լսութեամբ կարելի է տուել այն չարեկան երեխայի մասին, որը մի երկու ամի զարգաւում է իր աղիւակների տուփով և կառուցանամ է նոր և նոր շինութիւններ, —թէ զա նոյնպէս իւր կը ամփորի ինչ պէս որ այժմ լաւ խաղում է:

Բայց որովհետի խաղի զլուխոր նպաւուկն է երե-

խայի մտքի գործունեութիւնը արթնացնել և այդ ճաշնապարհով նրա հոգին շարունակ ուրախ տրամադրութեան մէջ պահել, հասկանալի է որ չը պէտք է մէկ անգամից նւերել երձիաներին չափազանց շատ խաղալիքներ: Շատ խաղալիքներ միաժամանակ ստացած մասունքները գտնուում են մի տեսակ շփոթութեան մէջ, ուրովինեան չը զիտեն, թէ որին տան առաջնութիւն. իսկ որովհետեւ խաղալ բոլոր խաղալիքներով միաժամանակ չեն կարող, ուստի մէկից արագ անցում են միւսին և ոչ մէկից չեն ստանում այն մտաւոր օգուտը, որը պիտի ստանային: Այդպիսիների զրութիւնը շատ է յիշեցնում առակի այն էշին, որը կանգնած է եղել զարու և խոտի մէջտեղ և վերջը սովոր ստակել է, որովհետեւ չի լմացել թէ նուից նաևս սկսի ուտել:

Երեխանների խաղալիքներով կշտանցն ու ձանձրանը առաջ է զալիս մանաւանդ մօտիկ ապկականների և ան բորբոքմանների: Հնորդիւ, որոնց շիտեն որ աւելի շւատ շահած կը լինեն ծնողների սիրտը, եթէ երեխաններին հաւատ թիւն սրաւաւոծ լիսեն, և նուիրած նև այդ երեխաններին թանկագլուխ ըստաներ: Բայց և այս չորթերի ձարը հեշտ է գտնել կարելի է երեխանների ձեռքին թողնել խաղալիքներից մի քանիսը, իսկ միւսները պահել և տալ մէկ-մէկ, միայ այն ժամանակ, երբ նախորդները կը կորցնեն նորութեան հրապարը: Մի առժամանակ թագցրած հին խաղալիքները մանկական աշքում կը լին: Կայ ու երեխաններին մինչ այդ ժամանակ մեռած կը թուում: Այսպիսի սուրբին մինչ այդ ժամանակ մեռած կը թուում: Այսպիսի սուրբին մինչ այդ ժամանակ մեռած կը թուում: Այսպիսի սուրբին մինչ այդ ժամանակ մեռած կը թուում:

Առաջ բարեկամներ լինեն, որոնց հետ երեխանները քանի յանուի քաղցր վայրկեաններ են արդէն անցկացրել, և այդ պատճառով նրանք աւելի արախութիւն են պատճառում, քան թէ բարբուֆին նոր իրերը: Այս եղանակով չնչին ծախսերով կարելի է երեխաններին անընդհատ ուրախութիւն պատճառուի և պահպանի նրանց մէջ մտքի թարմութիւնն ու աշխայքը:

Եթէ մենք տանձնապէս շշշառմ ենք այն հանգամանները, որ երեխան որչափ կարելի է ինքը խաղայ, այստեղից բոլորովին չը պէտք է եղանակացնել որ հասակաւորները չը պէտք է երբեմն միջամտեն նրա խաղին, որ չը սիրափ ցոյց տան նրան, թէ ինչպէս կարելի է զբաղել օպուաէտ կերպով այս եւու այն խաղամիքով, որ վերջապէս՝ իրենք էլ չը պէտք է նրա հետ խաղան: Երեխաննեն էլ հասակաւորների պէս երբեմն ունենաւ և նուաոր ձանձրովի բազեներ և նուաոր ձանձրովի բազեներ: Այսպիսի բազեներով մէծերը միջամտութիւնը բոլորովին ուղիղ է և երեխանները հայտնաւուրած թեամբ կը լուղունին նրանց միջամտութիւնը և օգտաքիւթիւնը, եթէ միայն մեծերը լուց եղ ուն հունց թէ ինչպէս պիտք է խաղան այն իրերով, որոնք մինչ այդ ժամանակ լուղունին իրաւութեան շրջանից դուրս են եղել, և եթէ մեծերը իրենց երեխակցութեամբ կը կննու նացնեն այն, ինչ ու երեխաններին մինչ այդ ժամանակ մեռած կը թուում: Այսպիսի մանկական խաղին այն ժամանակ, երբ երեխանները իրենք հանգիստ և անաղ-

մուկ խաղում են: Այսպիսի գէպքերում մէծերի խառն-
ւելը խզում է մանուկների մտքերի ընկը, քանի ոչ
ստիգում է որ նրանց մտաւոր գործունէութիւնը ու-
րիշ շաղով ընթանայ: Այս ընդհատումը երեխաների
վրա վատ տպաւորութիւն է թողնում և առաջացնում է
տհաճութիւն ու գժգոհութիւն: Երեխաները այս զէպ-
քում այն թուղթ կամ նարդի խաղացողի գրութեան
մէջն են ընկնում, որը արգէն իր մտքում որոշ հաշիւներ
է արել, նպատակներ է զրել և այդպէս է թուղթը վայր
գալիս կամ քարը. տեղից շարժում, իսկ այդ միջոցին
մօտենում է աւելի վարժ խաղացողը և խորհուրդ է տալիս
նրան ուրիշ խառ, որ բղխում է մտքերի ըոլորտին այ-
դուգակցութիւնից: Սպորաբար այսպիսի գէպքում խա-
ղացողը տանուլ է տալիս, քանի որ չէ կարողանում ա-
ռաջուց գուշակել և հասկանալ իր խորհրդատուի մտքե-
րի զուգակցութիւնը և այդ զուգակցութեան հետեանք-
ները, և երակորադիւնութեան զգացմունքը փոխարէն,
որ առաջ նա տածում էր զէպի իր խորհրդատուն կար-
ծեցեալ օգնութեան Համար, այժմ նրա սիրութ լցում
է անբաւականութեամբ:

Վէրև յիշւած խաղերը զարգացնում են գլխա-
ւորապէս մանուկի երեակայութիւնը, այսինքն՝ զանա-
զան զուգակցութիւնների մէջ են զնում նրա հասկա-
ցողութիւնները, բայց կան և ուրիշ, առանց գործիք-
ների խաղացու խաղեր, որոնք առաջիններից ոչպա-
կաս զարդացնում են մանկական միտքը: Այդ խաղերը
կարող ենք ընկերական խաղեր անւանել, որովհետեւ

դրանց մէջ մասնակցել խարսդ ևս միաժամանակ բազ-
մաթիւ երեխաներ:

Սպորաբար այլպիսի խաղերը պէտք է առաջնոր-
դի միհասակաւոր մարդ, որովհետեւ երեխաները առանց
նրա օգնութիւն չեն կարող գլուխ դուրս տանել
Խմբական խաղերից շատերը հանրածանօթ են և մեծ
մասամբ առնամած ու ուղղվողի միջոց: Այդ գուածա-
թիւնների ժամանակ մէկ անգամից կարելի է զանազա-
նել ժիր և աչքարաց երեխաներին ծանրաշարժ երե-
խաներից, որոնց միտքը քաշ է գալիս կրիայի քայ-
լերով:

Ընկերական խաղերը առանձնակի խաղերից այն
առաւելրութիւնն ունեն, որ կարող են խաղացւել թէ
բացօքեաց և թէ ունեւակաւ և շարժան մէջ
են զնում փոքրիկ երեխաներին: Հենց որ հասակը և
առարտաց եղանակը թոյլ են առանց ամենից լաւն և
թէ մէկ և թէ միւս տեսակ բարձր իրաց հետ մաս-
ցնել:

Երբէք չը պէտք է ընդունալ, որ երեխան երկուր
ժամանակ անցկացնի ոչ սի բանի մասին չէ մտածելով:
Եթէ նո ձանձրացրել է մի խաղալիքից, տանք նրան
մի ուրիշը: Եթէ զա էլ սրան չը զբաղեցնում, պարհնք
նրա հետ, երգինք որիէ ախորժելի եղանակ, իսկ եթէ
գուրը լաւ օր է, զնունք նրա հետ պրօնիկու, ովառ-
մենք նրան որիէ հետաքրքրական բան, կամ միանիք
նրա հետ միասին խաղարի Բայց ոչ մի կիրարի թոյլ չը
տանք որ նա մնայ մտաւոր և մարմնական անգործու-
թեան մէջ, որովհետեւ երեխայի ընական ձգառումն է

գործունէութիւնը, և միայն հիսանդ կամ թուլակազմ հրեխան է զգում զժկամակութիւն դէսլի այդ:

Բացի գործունէութեան ձգտումից, երեխայի մէջ նկատում է նաև նմանազութեան ձգտում, որից պիտի օգուտ քաղենք նրա հութեան և բարոյական կրթութեան համար: Երեխաները սիրում են հետեւ հասակաւորների օրինակին և եթէ ուզում ենք, որ հրեխան սիրով և յօժարութեամբ կատարի այս կամ այն գործը, չը պիտի հարկադրենք նրան, այլ ինքներս նրա ներկայութեամբ կատարենք այդ գործը: Թողնազարմանայ մեր ճարպիկութեան և հմտութեան վրա, և անկասկած մի փոքր ժամանակից յետոյ ինքն էլ կուզենայ նոյնն անել: Ռուբեն ծալենք երեխաների աշքի տառաջ տուփ, թռչնակ, նաւակ և այլն, գարսէնք ճօգայիները, կտղմենք ձողիներից տուն, կարմաք գեղեցիկ զարդ թղթի վըրա կամ ծեփենք կաւից կամ մեղմամաշից թռչնակ, չնիկ, և այլն, և անտարակոյն երեխան իսկոյն կը իբն դրչի, որ հուշ ցոյց տահար թէ ինչուէւ պէտք է ոյլ անել:

Սակայն թող չը սխալւենք, մտածելով թէ երեխան մէկ անգամից կը սիրի որեւէ գործ. ընդհակառակրյանախ շատ օամանակ է անցնում, մինչև որ երեխայի մէջ զանթնում է նմանազութեան իւխա փափազը և այդ փափազը գործի է անցնում: Անշուշտ կանցնեն երկու և երեք շաբաթներ, որոնց ընթացքում նա կարծու անտարբեր կը նայի մեր գործի վրա: Բայց թէ կուզ նոյն իսկ աւելի երկար մենք հարկադրուած լինենք սպասելու երեխայի մէջ նետաքրքրութեան զարգացման մէջ:

ուն, անշեղ ընթանանք այդ ճանապարհով, քանի որ նրա հոգու մէջ մէկ անգամ արթնացած փափազը հարիւրապատիկ աւելի մ'եծ նշանակութիւն ունի, քան թէ մեր հրամանը: Այն երեխան, որը մեր պատէրով է գործը կատարում, շատ աւելի քիչ զւարձութիւն է զգում, քան թէ երբ կատարում է նոյնը սեփական ներքին դրդումով: Ոչ մի գէպքում չը ծաղրենք երեխայի անաջող փորձերը և ներողամտութեամբ գնահատենք նրա ձիգերը, ցոյց տալով միայն, թէ այս կամ այն բանը կարելի էր աւելի լաւ անել: Միւս կողմից՝ չափազանց չովինք նրա նոյն իսկ միջակ և լաւ աշխատութիւնը, այլ ցոյց տանք փորբիկ թերութիւնները, որպէս զի նրա մէջ միշտ կենցանի մնայ աւելի կատարեալ գործ առաջացնելու, աւելի առաջադէմ լինելու ձգտումը:

Այս տեսակ յօժարակամ աշխատանքը կարող է ամեն օր կէս-կէս ժամ տեսել, հետզհետէ և աւելի երկար, նայելով երեխայի սիրոյն և հաճութեանը. Այդ աշխատանքը զանազանակերպութիւն կը մտցնի նրա ամենօրեայ գործերի մէջ և կը նախապատրաստի աւելի կարեռ և սիստեմատիք աշխատանքի, իսկ եթէ յիշելու լինենք նաև, որ գործունէութեամը է կազմակերպուում կամքը և որ կրթութեան գլխաւոր նպատակը ոչ թէ կամքի ոչնչացնելն ու ճնշելն է, այլ նրան նպատակայարմար ուղղութիւն տալը, այն ժամանակ կը հասկանանք, որ այգամք հետզհետէ սովորեցնելով երեխային աշխատել կը հասնենք շատ մ'եծ և բարերար արդիւնքների ոչ միայն նրա մտաւոր ուժի, այլ և բնաւորութեան զարգացման մէջ:

Խաղալիքների ընտրութիւնն ու արժէնքը, նրանց ազգեցութիւնը, խաղալիքների տեսակները:—Թանկագին և էժանագին խաղալիքներ:—Երեխանների ձեռքով պատրաստած խաղալիքներ:—Խաղն ու աշխատանքը:

Մնում է վերջապէս որ կանգ առնենք հէնց խաղալիքների և նրանց համեմատական արժէքի վրա: Վերև յիշւած խաղալիքները և խաղերը համապատասխանում են իրենց նպատակին, քանի որ միքանիսը՝ մասնաւորապէս երեխանների միտքն են գործունէութեան մէջ զնում, միւնները զարգացնում են նրա մարմինը, դարձնելով նրան աւելի ճկուն, վերջապէս՝ շատերն էլ մի անգամից այդ երկու նպատակներն ունեն աչքի առջև: Բայց չէ որ խաղալիքների խանութիւնները, բացի վերև յիշւած իրերից, լցւած են ամեն տեսակ առարկաններով, որոնք աչքի են ընկնում իրենց սրամտութեամբ, գեղեցկութեամբ և... թանգութեամբ:

Շատ և շատ սիամլում ենք, կարծելով թէ ինչ-քան աւելի գեղեցիկ խաղալիք նւիրենք երեխային, այնքան աւելի մեծ ուրախութիւն պատճառած կը լինենք նրան: Երեխան ստանալով երկու տիկիկ — մէկը՝ ոովորական, իսկ միւսը՝ սաստիկ թանկագին, — մեղամում զլիսով, բնական մազերով, նորագոյն պարիգեան նուրբ տարագով, անկասկած առաջնութիւն կը տայ վերջինիս, բայց ոչ երկար ժամանակ. մի կարձ միջոցից յետոյ մի կողմ կը շարտի նրան և կը դառնայ հասարակ տիկնիկին: Ինչպէս որ երեխայի համար ամենայարժար շորը համեստ շորն է, որի կեղտոտւելուց

առանձին երկիրդ չունեն,—մի շոր, որ թոյլ է տալիս և ցատկուել, և պար գալ, և վազել, մի խօսքով՝ չի կաշ-կանդում նրա ազատ շարժումներն և ուրախ խաղերը, այնպէս էլ ամենայարժար խաղալիքները նրա համար կը լինեն հասարակ և քիչ արժէնքաւոր և ոչ թանկագին խաղալիքները: Իր պարզ տիկնիկը երեխան կարող է զգեստաւորել, մերկացնել, պառկեցնել անկող-նիկի մէջ և առանց որևէ արգելքի խաղալ, մինչդեռ իր գեղեցիկ, թանգ զգեստներով զլպլտած տիկնիկին նակարող է միայն զրօսանքի տանել և այն էլ միշտ վախճառվ, չը լինի թէ նրա գեղեցիկ զգեստը փչանայ: Սակայն բացի զրանից, կան այլեւ ուրիշ շատ խաղալիքներ, որոնց հետ երեխանները առաջին յափշտակութիւնից յետոյ չը գիտեն իսկապէս թէ ինչ անեն: Անշուշտ լաւ խաղալիք է մի փոքրիկ արջ, բնական ըըրդով, ետևի թաթերի վրա մեքմայի օգնութեամբ բարձրացող և մըթմըթոց հանող, բայց հէնց որ երեխան մի ժամ նրանով խաղայ, կը կշտանւայ նրա տեսքից, արդէն այլ ևս չի մտածում նրա մասին, մինչդեռ մի հասարակ, կոպիտ շինւած արջ կարող է նրան և ծիռւ և էշի, իսկ նեղն ընկած ժամանակ նաև շան տեղ ծառայել, ասել է թէ՝ երեխան կարող է նրանից օգտւել զանազան նպատակներով:

Այս տեսակ անգործնական խաղալիքների շարքը պէտք է դասել այն բոլոր խաղալիքները, որոնք ունեն սրամիա բարդութիւններ, օրինակ՝ ձայն են հանում, վազում են, թռչուտում են, նւազում են և այլն: Ի հարկէ, մարդուն դուր է զալիս տեսնել մի գեղեցիկ կահաւոր-

ւած դահլիճ, որտեղ տեղաւորւած են սի քանի փոքրիկ ֆիգուրներ, որոնք ներկայացնում են հիւրի լընդունելութիւն։ Գեղեցիկ է նաև ծօճանակը, կարուսէլը կամ սատանայական ջաղացը՝ նրանց մէջ տեղաւորւած սարդկանցով, բայց ասէք ինդրեմ, ինչ պիտի երեխան անի այդ միշտ միհանոյն գրութեան մէջ մնացող անձնաւորութիւնների հետ։ Թիչ թէ շատ կարծ ժամանակամիջոցից յետոյ երեխայի աչքը կը կշտանայ նրանց տեսքով և նա կոկոսի անտարբեր հայեցքով նայել նըրանց։ Այսպիսի խաղալիքները իդուր միայն քամում են ծնողական գրականները, իսկ երեխային ոչ մի օգուտ չեն բերում։

Հասարակ խաղալիքներից յետոյ երեխանները ամենից շատ սիրում են իրենց ծեռքով շինած խաղալիքները։ Փալասների մէջ փաթաթւած փայտի կը տորը այն երեխայի համար, որի ձաշակը չեն փչացրել թանգագին խաղալիքներով, կը լինի նոյնչափ գեղեցիկ տիկնիկ, որչափ և մի այլը։ Առհասարակ իբրև կանոն պէտք է ընդունենք, որ երեխային չը պէտք է տալ մի այնպիսի խաղալիք, որ նա ինքը կարող է շինել։ Տանք օրինակ՝ ձի, բայց մարակը թող նա ինքը շինի, և այդ մարակը նրա համար աւելի սիրելի կը լինի, քան թէ խանութում թանգ գնով ձեռք բերւած մի ուրիշ ամենագեղեցիկ մարակը։ Զանենք նրա համար արձիճէ զինուորներ, այլ տանք աններկ զինուորների պատկերներ—ներկելը, կացնելը, կանգնեցնելը թող նրա գործը լինի։ Այսուշտ հարկ եղած դէպքում չը պիտի խոյս տանք այս աշխատանքի մէջ նրան օդնելոց։

Ոյսպէս նրա ձեռքով զգեստաւորւած և դասաւորւած զօրագնդերը նրան աւելի մեծ ուրախութիւն կը պատճառ են, քան թէ ամենագեղեցիկ փայտէ կամ արձիճէ ասպետները, որոնց շինելու մէջ ինքը ոչ մի մաս չի ունեցել։

Վերջապէս երեխաններին զրագեցնում են նաև որոշ ծառայութիւնները անտեսութեան մէջ, բայց ամեն ինչ կախւած է այն եղանակից, թէ ինչպէս սիրել կը տանք նրանց այդ զբաղմունքը։ Ուրիշ ազդեցութիւն կոնենայ երեխանների վրա, եթէ մայրը նրան յայտնի, որ վազր, իբրև փարձատրութիւն նրա խելօք և կարգապահ լինելու համար, թոյլ կը տայ որ օգնի թարմ սիսեռը իստակելու, կամ պոչերը պոկելու կենասիններից, որոնցից պիտի մուրաբայ (անուշեղին) եփւի—և ուրիշ ազդեցութիւն, եթէ մայրը սկսի ուղղակի հարկադրել նըրանց այդ անելու։

Առաջին դէպքում նրանց համար այդ կը լինի խաղ, իսկ երկրորդ դէպքում՝ աշխատանք, ուստի առաջին դէպքում նրանք սիրով կը կոչեն զործին և կը սովորեն աշխատել ընդհանուրի օգտին։

Վերջապէս խաղալիքների շարքը պէտք է դասենք նաև հեշտ և մատչելի ձեռվ առաջարկող հանելուկեները։ Դրանց թիւը չը պիտի չափազանց շատ լինի, որովհետեւ երեխան ճշմարիտ մեծ հաճոյք է զգում, երբ կարծես առաջին անգամն է լուծում արդէն իրեն լաւ ծանօթ հանելուկը։ Այսուեղ զիխաւորն այն է, որ երեխայի սէրը և հետաքրքրութիւնը գրգռուի, ոչ թէ նրա միտքը սրւի։

Համեմատաբար աւելի շատ տեղ տեխնք այս գըլ-
խի մէջ մանկական խաղերին և խաղալիքներին այն
պատճառով, որ մեր համոզմունքով՝ դրանք երեխայի
մտաւոր կրթութեան ամենաչափան միջոցն են մինչև
վեց տարեկան հասակը, իսկ բոլոր ուրիշ միջոցները,
այն է՝ գրութիւնը, ընթերցանութիւնը կամ լեզուների
ուսուցումը ճնշում են միայն երեխաների հոգին և զըր-
կում են նրան ընական ազատութիւնից, ուրախու-
թիւնից:

ԱՏԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Երեխայի ստախօսութիւնը, հանագները:—Խոստմազանցութիւնը,
քողարկումները:—Դայեալի ստախօսութիւնը:—Մօր ստախօսու-
թիւնը, սպանալիքի ազդեցութիւնը, պատժի երկիւղը, ակամայ
և դիտաւորեալ ստախօսութիւնը:—Օրինակը:

Երեխայի սէրը գէպի ծնողները, հսազանդութիւ-
նը նրանց հրամաներին և պատէրներին, կարգապահ,
գործունեայ և աշխատասէր լինելու սովորութիւնը և
վերջապէս՝ լաւ օրինակը ոչ միայն կը պահպանեն երե-
խային բարոյական թերութիւններից, այլ նոյնիսկ կը
դառնան բարերար սազմեր բոլոր այն գեղեցիկ յատ-
կութիւնների համար, որոնք ժամանակով պիտի զարդա-
րեն նրա հոգին: Այսպիսի բարեյաջող գէպերուն կար-
ծես նրա մէջ չը պիտի նկատէր ոչ ստախօսութիւն: ոչ
էլ խարեբայութիւն: Սակայն այնուամենայնիւ երեխան
կարող է զեռ ևս ստախօս լինել: Այդ պատճառով մենք

պէտք է աւելի կանգ առնենք ստախօսութեան ծագման
հարցի վրա: Եթէ կամենում ենք երեխայի հոգին պահ-
պանել այդ զւելի արարքից, անհրաժեշտ է համել
մինչև աղբիւրը և հասկանալ՝ որտեղից են բղխում սը-
տախօսութեան ազբիւրը, — այլպէս մենք ոչ մի կերպ
չենք կարողանայ նրա առաջն առնել:

Երեխան բնութիւնից ծշմարտախօս է. ինչ որ
հաւանում է, այն բանի կողմն է պարզում իր ձեռքը
կամ խօսքով պահանջում, իսկ ինչ որ նրան զըզ-
ւեցնում է, նա իրենից ետ է մղում: Երեխան նոյն
իսկ չէ կարող ուրիշների ստախօսութիւնը տանել:
Նկատած է որ ոչ մի բան այնպէս չի վրդովում
մանուկին, ինչպէս նրա ներկայութեամբ ասւած սու-
տը: Այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետեւ ստախօ-
սութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդուս մաքառումը
իր գիտակցութեան հետ, իսկ ամեն մաքառում պա-
հանջում է մի յայտնի մտաւոր լարում, որ երեխայի
ուժից վեր է: Ուրեմն երեխայի ծշմարտախօսութիւնը
նրա արժանաւորութիւն չէ, այլ անխուսափելի հետեանք
է նրա հոգու կազմութեան:

Ապա ի՞նչիցն է որ ստախօսութիւնը յաճախ
բռն է դնում երեխայի ներքին աշխարհում:

Եթէ յիշեցինք, որ երեխան բնութիւնից սիրում
է և պէտք է սիրի ծշմարտութիւնը, այստեղից բոլորո-
վին չի ենթազրում, թէ նա չի կարող յաճախ շեղել
այդ ձան ապարհից, բայց այս զեռ խարեբայութիւն չէ,
որովհետեւ խարեբայութիւնը միայն ծշմարտութիւն
դիմամբ չասելն է: Երեխան զեռ հարկաւոր վարժու-

թիւնը չտնի ճիշտ դիտելու, դեռ չի հասկանում ժամանակի շատ և շատ յարաբերութիւնները, չի կարողանում զանազանել այս օրը վաղանից և եղեկանից, սիսալ է շաղկապում իր հասկացողութիւնները և սիսալ եղրափակութիւններ է անում նրանցից, և այս բոլոր գէպքերում շատ անգամ նա ենթարկելում է իր դեռ ևս անզուսպ երեակայութեանը: Երեխան ինքը սիսալած է լինում և իր սիսալը ճշմարտութեան տեղ է դնում: Դա ստախօսութիւն չէ և չը պէտք է համարել ստախօսութիւն. այսպիսի գէպքերում պէտք է ուղղել երեխայի սիսալը, ցոյց տալով նրա դիտողութեան մէջ սպրտած անձտութիւնը:

Եւ էլ, եթէ երեխան շարունակ իր շուրջը ճշմարտութիւն է լսում, երբէք նրա մտքով էլ չի անցնի սուտ խօսել:

Սակայն շատերը՝ շընայելով որ իրենք էլ սիրում են ճշմարտախօս լինել, թոյլ են տալիս իրենց հանաք անել երեխաների հետ պահանջելով, որ հաւատան բոլորին անհաւանական բաներին, երեխաների դիւրահաւատութիւնը այդ հասակաւորներին գւարճացնում է, իսկ չեն նկատում, որ այդպիսով երեխային էլ զըրդում են նոյնպէս վարելու իրենց հետ: Սրամիտ երեխան մի երկու անգամ խարւած լինելով՝ օգտում է պատասխանելու իրաւունքից և խարում է մեծերին: Յանդիմանելու փոխարէն հասակաւորները հիանում են երեխայի կարծեցեալ հսարագիտութիւնից և այդպիսով միսիայն աւելի են խրախուսում նրան որ իրենց այդպիսի հաճոյքներ պատճառի: Այսպիսի հա-

նաքը, կատակը դեռ ստախօսութիւն չէ, բայց յարդարում է ստախօսութեան ճանապարհը, որովհետեւ համոզում է երեխային, թէ երբեմն կարելի է նաև սուտ ասել և դրա համար զովասանքի արժանանալ:

Երեխան նոյնպէս չը պէտք է գիտենայ, որ կարելի է սուր խօսել. իսկ եթէ գիմում է մեզ հարցնելով՝ արդեօք այն երրորդ անձնաւորութեան ասած հանաքը ճշմարտութիւն է, մենք չը պիտի ասենք որ այն անձնաւորութիւնը սուտ խօսեց, այլ որ նա սիսալել է:

Երեխան կուրօրէն հաւատում է մեծերին, հաւատում է ոչ միայն նրանց ասածին, այլ և խոստացածին: Եթէ մեծերը չեն կատարում տւած խոստումը, նա այլ ևս չի հաւատում նրանց ճշմարտախօսութեանը: Եթէ երեխային խօսք ենք տւել, որ մի ժամից նա կերթայ զրօնսելու, իսկ որեւէ այցելութիւն կամ մի այլ ստիպողական հանգամանք արգելը եղաւ այդ բանին, այն ժամանակ երեխան՝ չը գիտենալով դեռ քաղաքավարութեան պայմանները և կեանքի պահանջները, մեր խոստումը չը կատարելը համարում է խոստումնազանցութիւն: Նոյնպէս լսու չէ տալ պայմանական խոստում, — «Եթէ քեզ լսու կը պահես, ինձոր կը տամ» — քանի որ երեխան իր վարժունքը չի կարող քննագատել, իսկ խնձորը համարում է իրաւամբ իրեն պատկանող սեփականութիւն:

Վերջապէս ընկերական կենցաղավարութեան մէջ կան այսպէս կոչւած՝ անմեղ ստախօսութիւններ, օրինակի համար՝ տանտէրը կամ տանտիկինը տանն են լինում, իսկ այցուլիներին հրամայում են ասել իրը

թէ տանը չեն, կամ երբ սիրալիքը ժպիտով և կեղծուրախութեամբ եմ ընդունում այցելուներին, իսկ հըրանց հեռանալուն պէս գժգոհութիւն են յայտնում նրանցից: Երեխաները երբէք չը պէտք է լինեն այսպիսի դիպւածների վկաներ և նոյն իսկ չը պէտք է լին սրանց մասին:

Վերջապէս բազմաթիւ ընտանիքներում տիրող արտայայտութեան և խօսելու չափազանցրած ձևերը, չափազանցրած գովասանքները և պախարակութիւնները, պատւաստում է երեխայի հոգու մէջ նոյնանման չափազանցութիւն: Քանի քանի անգամ լուս ենք, օրինակ այսպիսի դարձւածներ—«հաղար անգամ եմ ասել քեզ, որ ձեռք չը տաս. օրէն քառասուն անգամ եմ երեսդ, ձեռներդ լանում եմ և դարձեալ կեղտու ես» և այլն: Երեխան, որը գեռ չունի ոչ մի գաղափր խօսակցութեան այս ձեր մասին, զգում է իրականութեան և մեր խօսքերի անհամաձայնութիւնը և որովհետև այսպիսի խօսքերը լսում է բաւականին յաճախ, կամաց կամաց ինքն էլ է ընտելանում և սկըսում է գործածել չափազանցրած ոճեր:

Այլ ևս մէկ անգամ կրկնում ենք, որ հանաքները, խոստմազանցութիւնները և քաղաքավարութեան գործական սովորութիւնները զեռ ևս ստախօսութիւն չեն, բայց շատ են տրամադրում երեխային ստախօսութեան:

Այժմ անցնենք հասակաւորների այն սխալանքներին. սրանք ուղղակի, անմիջապէս տանում են երեխային դէպի ստախօսութիւնը:

Մեր ծծմայլները և դայեակները սովորաբար շատ են սկսում սիրել իրենց սանիկներին և պատրաստ են լինում ամեն տեսակ անախորժութիւն նրանցից հեռացնել, բայց որովհետև գրանք սովորաբար հասարակ կանայք են լինում, որոնք ոչ մի գաղափար չեն ունենում կրթութեան մասին, ուստի իրենց տեսակով են հասկանում այդ անախորժութիւնները և կամենալով որ և է կերպով գրաւել երեխայի սիրտը, երես են տալիս նրան և կատարում են նրա ամեն մի ցանկութիւնը: Այստեղից առաջ են գալիս շատ անհաճելի երևոյթներ, այսպէս օրինակ՝ երեխան բարկացած խփում է ձեռքով դայեակի երեսին կամ զարնում է ոտները գետնին և իր դայեակին այդպիսով վրդովեցնում: Սակայն շատ սակաւ է պատմում, որ մայրը, կամենալով միջամտել գործին, իմանում է զուտ ճշմտրութիւնը: Սովորաբար դայեակը, երեխային պատժից, խրատից, նախատինքից ազատելու համար, բոլորովին յեղաշըրջում է դէպրը: Արդեօք այդպիսի վարմունքը չպիտի երեխային թելազրի մտածելու թէ ստախօսութիւնով կարելի է ազատել պատասխանատւութիւնից:

Մի ուրիշ անգամ, իր սանիկին չափազանց սիրելուց, դայեակը տալիս է նրան այն, ինչ որ արգելել է մայրիկը և երբ մայրիկը հարցնում է, նա նորից դիմում է պատճառանքների: Իզուր չէ ասւած որ մօրից յետոյ դայեակն է ամենից աւելի ազդեցութիւն ունենում երեխայի բնաւորութեան վրա: Քանի քանի հասակաւորներ միայն այն պատճառով են ստախօս գտնել, որ իրենց դայեակներից են ձեռք բերել

խարելու սովորութիւնը: Նրանք սուտ են ասում բոլորովին աննպատակ կերպով, մանկութիւնից ուղղակի սովորած լինելուց: Որչափ յաճախ և նրանք, որոնք աւելի ուժեղ բնաւորութեան տէր են լինում, զգում են որ մի ինչ որ բան զրգում է իրենց սուտ խօսելու:

Այստեղ այլևս մէկ անգամ տեսնում ենք թէ որ չափ աւելի ուժեղ և հաստատ են լինում սովորութեան ձանապարհով իւրացրած յատկութիւնները, համեմատած այն յատկութիւնների հետ, որոնք գիտակցութեան հետեանը են:

Հէնց այնպէս, ինչպէս որ դայեակն է վարւում մօր վերաբերմամբ, մայրիկն էլ է յաճախ վարւում հօր վերաբերմամբ:

Շատ անգամ պատահում է որ երեխաների չարութեան առաջն առնելու համար մայրը դիմում է հօրը, իրը աւելի բարձր հեղինակութեան, իսկ հայրը անբաւական լինելով, որ իւր հանգստի ըստէները դառնացնում են այդպիսի՝ նրա խօսքով չնչին բաներով, սաստիկ խիստ է, մօր կարծիքով, պատժում մանուկին, և այսուհետեւ մայրը ցանկանում է խոյս տալ այդտեսակ անախորժ տեսարաններից և թագնում է կոմի փոքրացնում է երեխայի յանցանքը և այդպիսով ստախօսութեան օրինակ է տալիս նրան, եւ ինչպէս երկիւղը, ահը զրգում են մօրը ստախօս լինելու, այնպէս էլ երեխան՝ վախենալով այն անախորժութիւնից, որին ինքը կարող է ենթարկել ճշմարտութիւնը խօստովանելուց, սևա է խօսում իր հարազատ մօր առջև:

Երեխան մօր դէմ կուռում է նոյն զէնքով, որով մայրը կուռում է հօր դէմ:

Այսպէս տեսնում ենք երկիւղն է ստախօսութեան գլխաւոր պատճառներից մէկը, և այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև երկչուր ուղենայ չուզենայ պիտի դիմի ստութեանը: Բայց մեզքը այստեղ աւելի հասակաւորներինն է, քան թէ երեխաններինը: Յաճախ մեծերի միայն խիստ, սաստող ձայնը, նախատինքը երեխային այնպէս է կարծել տալիս, երբ թէ ինքը չափազանց մեծ յանցանք է դործել և իրեն մեծ պատիժ է սպասում: Հօր խիստ հայեացքից և ձայնից նրա դէմքը իսկոյն փոխում է, ստիները դողում են, ամբողջ կերպարանքից երկում է որ ճիշտ որ գործել է կասկածած յանցանքը, և այնուամենայնիւ, ինչպէս ասում են, լեզուն պապանձւում է և թոյլ չի տալիս նըրան խոստովանել յանցանքը:

Երեակայենք որ ինքներս այդպիսի երեխայի զըրութեան մէջ ենք, և մի փոքր միայն խստացնենք պարագաները, — զուցէ և մեր բերանը վակւի այդպիսի սպանական ձայնից կամ ակամայ ստիպւած լինենք սուտ խօսելու: Քաղցր խօսքերը, մտերմական դիմումը աւելի շուտով են զրգում երեխային խօսյն ճշմարտութիւնը ասելու, միայն թէ երեխան համոզւած լինի որ իր զանցառութեան համար չը պիտի ենթարկեի չափազանց մեծ պատժի:

Նոյնպէս չը պէտք է պահանջել երեխայից, որին բռնել էք յանցանքի մէջ տեղնուտեղը կամ որը խօստովանել է իր մեզքը, — որ խօսը տայ թէ այլ ևս եր-

րէք չի կըկնի նոյն յանցանքը, որովհետեւ այդպիսի գէպերում երեխան գտնուում է չարչարանքների ենթարկւած մարդու գրութեան մէջ, որը ճշմարտութիւնըն ու սուտը խառնում է, միայն թէ ազատւի գահնձի ձեռքից:

Վերջապէս խօսենք՝ ակամայ ստախօսութիւնից յետոյ, իսկական, դիտաւորեալ ստախօսութեան մասին։ Այսպիսի ստախօսութիւնը շատ սակաւ է նկատւում այն տարիքում, որը մենք աչքի առաջ ունենք, որովհետեւ պահանջում է աւելի բարդ մտաւոր զուգակցութիւններ, քան թէ այդ յատուկ է այդ հասակի երեխաներին։ Բայց եթէ մի այդպիսի բան, տեղի ունենաւ և այդ հասակում, նախ և առաջ չը պէտք է այդ համարենք չափազանց մեծ կարեռութիւն ունեցող մի յանցանք և երբէք չը պէտք է ստախօս անւանենք երեխալին, որը առաջին անգամն է սուտ խօսում։ Ուստի՝ եթէ երեխան առանց մեր զիտութեան վերցրել է տիտէից և ծածուկ կերել է տանձը և մենք հաստատ գիտենք որ այդ անել կարող էր միմիայն նա, չը պահանջենք, որ խօստովանի իր յանցանքը, որովհետեւ զըրանով կը զրգենք նրան առաջին անգամ սուտ խօսելու, այլ պարզ ասենք նրան որ այդպէս անել հարկաւոր չէ։ Իսկ եթէ մի ուրիշ անգամ նա խօսի ճշմարտութեան հակառակ մի բան, ցոյց տանք նրան մեր խորին զարդանքը և վիշտը, բայց չասենք՝ «սուտ ես խօսում», «ստախօս ես», այլ «ճշմարտութիւն չասացիր և սաստիկ վշտացրիր ինձ»։ Ամեն անգամ պէտք է սուտ խօսող երեխային ցոյց տանք որ ստախօսութիւ-

թիւնը նրան ոչ-մի օգուտ չի բերում, այսինքն՝ մենք պէտք է իսկոյն և եթ ձեռքիցը խլենք ծածուկ վերցրած տանձը, զրպանից հանենք թագցրած շաքարեղենը և այլն։

Հին մանկավարժութիւնը շատ անգամ փորձութիւնների էր ենթարկում երեխային՝ թէ արգեօք կարսղ են զիմանալ զայթակութեան, ուզում էր համոզել՝ արգեօք նրանց առաքինութիւնը այնքան մեծ է, որ զիմանայ ամեն փորձութեան։ Այսպէս օրինակ՝ թողնում էին երեխային մենակ քաղցրեղէններով լիքը սենեակում և այնպէս էին անում, որ նրա աչքը մնայ այդ քաղցրեղէնների վրա, աչքածակութիւնը զրգուի, տեսնենք՝ նա մի բան կը վերցնի։ Այժմեան մանկավարժութիւնը բոլորվին հակառակ սկզբունքի է հետեւում և երբէք երեխայի առաքինութիւնը չի ենթարկում չափազանց մեծ փորձութեան, որովհետեւ զիտէ որ այդ առաքինութիւնը զեռ մի նորաբոզրոջ բոյսի պէս քնրոյշ է, և աշխատում է հեռացնել նրանից այն ամենը, ինչ որ որևէ կերպ կարող է վնասել այդ առաքինութեան զարգացմանը, մենք պէտք է հեռու պահենք երեխային սուտ խօսելու ամեն դէպքից, ամեն մի հնարաւորութիւնից, և այդպիսով նորագոյն մանկավարժութիւնը աւելի է նպաստում երեխաների մէջ ճշմարտութեան ամրապնդւելուն, քան թէ հինը, որ ամեն քայլափում համոզում էր թէ որքան թոյլ է և զեռ անհաստաց մանկական առաքինութիւնը։

ԱՅՐԵԱՄԲՏՈՒԹԻՒՆ

Բարեսրտութեան և համակլութեան առաջին նշանները:—Սիրա-
լիբութիւն և բարեացակամութիւն պահանջելը. զոհողութիւն,
ներհակութիւն, նախատինք, բարի օրինակ, համակլութիւն, ոչ
գէպի մերձաւորը:

Անսոնաւոր պայմանների մէջ, այն է՝ առողջ և
ուրախ մեծացող երեխան հեշտութեամբ իր բնական
բարեացակամութիւնը և սիրալիբութիւնը տարածում
է շրջապատող մերձաւոր անձնաւորութիւնների վրա:
Այդ համակրութիւնը փոքր երեխան զլիսաւորապէն ցոյց
է տալիս նախ դէպի չափահանները, և թէկ սկզբում
այդ զգացմունքը առաջանում է անօդնական լինելու
անախորժ զգացմունքից, բայց և այնպէս արդէն իսկա-
կան բարեսրտութեան հիմք է հանդիսանում:

Այս համակրութեան առաջին նշանները երեխայի
մէջ նկատում ենք մօտաւորապէս կեանքի վեցերորդ
ամսում: Հետզհետէ երեխայի մէջ զարթնում է համակ-
րանք դէպի իր հասակակիցները. նա ժպտում է, երբ
հայելու մէջ տեսնում է իր պատկերը, նոյնպէս ծիծա-
ղում է, երբ տեսնում է իր նման մի ծծկեր, թէկ դեռ
մի առանձին հետաքրքրութիւն չէ ցոյց տալիս դէպի
նա: Այդ ժամանակից հարկաւոր է օգտւել այդ նշան-
ներից և երեխմա առիթներ տալ հասակակիցների ըն-
կերութեան մէջ զանւելու: Սակայն այդ տարիքում ե-
րեխան սովորաբար իր քնչքութիւնը տւելի ցոյց է
տալիս դէպի կենդանիները, և այդ նոյն իսկ աւելի

սաստիկ, բան թէ դէպի իր նման փոքրերը: Շունը,
կատուն իրենց ուրախութիւնը արտայայտում են երե-
խային հասկանալի լեզով, դրա համար է որ երեխան
սիրում է նրանց և գուրգուրում, մանաւանդ որ նըանց
կողմից ոչ կի ընդդիմազրութեան չի հանդիպում, մինչ
դեռ իր նման փոքրերը յաճախ իրեն հակառակում են*):

Արդէն փոքր երեխան իր բարեացակամութիւնը
դէպի ուրիշները ցոյց է տալիս ժպտալով, ձեռները
թափահարելով, բայց այդ բարեացակամութիւնը, որ գեռ
շատ կրաւորական, չէզօք է լինում, պէտք է հետզհետէ
դարձնել գործունեայ, ներգործական: Դայեակի կամ մէկ
ուրիշի խնդրելով, երեխան տալիս է նրան մի փոքրիկ
կտոր ձեռքին ունեցած սպիտակ հացից, ստացողը
ուտում է երեխայի ներկայութեամբ և ցոյց է տալիս
նրան իր երախտագիտութիւնը: Երեխան տեսնելով որ
ուրիշին մի ախորժելի բան է արել, ցանկանում է կըր-
կնել իր նւէրը: Այսպիսի փորձերն և վարձութիւնները
շատ ու շատ նպատակայարմար են և ոտքորեցնում են
գործով ցոյց տալու սիրալիբութիւնը, միայն թէ ինար-
կէ ըս պէտք է այդ փորձերը յաճախակի կրկնել և
ըս պէտք է պահանջել սաստիկ մեծ զոհարերութիւն

*.) Օգտւելով հանգամանքից նախազգուշացնում ենք, որ
ըս պէտի թոյլ տալ, որ երեխան շոյի շանը կամ կատւին, որովհե-
ակ երեխան յաճախ մատը ըերանն է տանում և հեշտ կարող է
կուլ տալ այդ կենդանիների մազի մէջ բուն դրած վնասակար
միջամները, — եւ չենք առում որ ըս պէտք է թոյլ տալ համբուրէ
կենդանիներին:

երեխայի կողմից: Այսպիսի փորձերը սակայն դառնում են աննպատակայամար, եթէ ընդունողը՝ տեսնելով երեխայի ծամածուած երեսը և արգէն լաց լինելու պատրաստ շրթունքները, շտապով վերադարձնում է իրեն տուած նւէրը և գեռ շնորհակալութիւնն էլ է յայտնում երեն ցոյց տուած բարութեան համար: Ի հարկէ նոյն իսկ ամենաչնչին զոհաբերութիւն կարող է այնքան էլ ախորժելի չը լինել, բայց այդ փոքրիկ դառնութեան վարձատրութիւնը կը լինի այն ուրախութիւնն և երախտագիտութիւնը, որ ցոյց է տալիս ընդունողը: Բայց եթէ նկատենք որ զոհաբերութիւնը երեխայի համար արգէն շատ ծանր է, աւելի լաւ է չը պահանջենք, որովհետեւ այդպիսով նրան զգւեցնում ենք բարեգործութիւնից, որը նրան այնպիսի մեծ անախորժութիւն է պատճառել:

Քանի աւելի երեխան մեծանում է, այնքան աւելի պէտք է ընդարձակեն նրա ներզործական բարեսըրտութեան շրջանը, սովորեցնելով որ կերակրի շանը, կատուին, ծախիկն կամ ճաւատին: Թող նրա ձեռքը սովորի թէկուզ մի փշանք հանել իր սեփական բաժնից ուրիշ կենդանիների համար. թող սովորի մեծարել իր հասակակիցներին և մեծերին այն քաղցրեղէնով, որ ստացել է իր ծննդեան, անւանակոչութեան օրւայ առիթով կամ մի ուրիշ պատճառով: Այսպիսի դէպքերում պատճութիւն տանք նրա կամքին, կարող ենք ուզիդ է նրան խորհուրդ տալ, խրախուսել, բայց թողնենք որ ինչ ուզում է անի իր սեփականութեան հետ: Նոյնպէս շատ վատ կը լինէր, եթէ այդ առիթով

մենք նրան յանդիմանութիւն կարգալինք և նոյն իսկ աւելի կը նպաստէր նրա բարեսրտութեան զգամունքի զարգանալուն այն, որ նա, ինչպէս առակի ասիւծը, ինքը բաժանի իր ունեցածը և իրեն թողնի ամենամեծ բաժինը, քան թէ այն, որ նա մեր հրամանին հնագահութիւն էլ է յայտնում երեն ցոյց տուած բարութեան համար: Ի հարկէ նոյն իսկ ամենաչնչին զոհաբերութիւն կարող է այնքան էլ ախորժելի չը լինել, բայց այդ փոքրիկ դառնութեան վարձատրութիւնը կը լինի բոլորովին ազատ, իսկ երկրորդ դէպքում նա մեր կամքը կատարի, բայց սրտի խորդում կը ափսոսայ իր արած բարի գործի համար:

Հետզհետէ երեխան պէտք է իր համակրանքը ո: Պէտք աւելի ու աւելի լայն շրջանին, նա պէտք է բոլոր մարդկանց բարի համարի: Եթէ երեխաները իրար հետ վիճում են և իրար հետ ընդհարւել են, թող երբէք մայրը չը յանդիմանի ուրիշի երեխային և թող իր սեփական երեխայի պաշտպան չըկանգնի: Այն դայեակը, որը շուտով խստում է խաղընկերի հետ կուող իր սանիկին և սկսում է նախատել նրա հակառակորդին, շատ վատ. օրինակ է տալիս իր սանիկին և բարկութիւն է սերմանում նրա սրտի մէջ դէպի իր նման էսակը: Նոյնպէս անմիտ վարմունք է այն դաստիարակչունու վարմունքը, որը՝ կամենալով վայր ընկած երեխայի լացը կտրել տալ, խփում է յատակին կամ թէ հրամանում է որ խփի մի ուրիշ անձին, որը իրը թէ նրա անշնորհութեան պատճառ է եղել: Այսպիսի դէպքերում երկու սխալ է նա գործում. մէկ՝ որ թոյլ չի տալիս երեխային ճիշտ ըմբռնել իր անկման իսկական պատճառը, և երկրորդ՝ որ բարկութիւն է արծարծում նրա մէջ դէպի կողմանկի անձերը:

Երեխաները, որչափ կարելի է, չը պէտք է լսեն,
ինչպէս են ուրիշներին բարկութեամբ յանդիմանում,
թող այնպէս կարծեն իրը թէ բոլոր մարդիկ բարի են,
թէ—և բոլորը չեն ապրում միատեսակ կացութեան մէջ,
թող գիտենայ որ կան չքաւորներ և հաշմանդամներ, որ
կան նաև կեանքի՝ իր ունեցած յարմարութիւններից
զուրկ երեխաներ, թող սովորի որ բոլոր մարդիկ
անխափի մեր մերձաւորներն են, որոնց օգնելը մեր
ամենանւիրական պարագն է։ Աղքատի, խեղճ անդա-
մալոյժի տեսքը թող նրա մէջ կարեկցութիւն զարթե-
ցնի, ոչ թէ զգւանք և խորշանք, թող աշխատի նրանց
անբախտութիւնը թիթևացնել սեփական միջոցներով,
և ոչ միայն ծնողների հաշւով։

Երբ աղքատը զուրսը մեր ճաշի ժամանակ ողոր-
մութիւն ինզրելիս լինի, մի ափսէ զնենք սեղանի վրա
և նրա վրա հանենք մեր ամանից աղքտափ բաժինը,—
մի ըովէից այդ ափսէն կը լցւի մեր փոքրիկների
տուրքերով։ Երբէք զգւանքով չը խօսենք չքաւորի
մասին, այլ երեխայի ուշադրութիւնը զարձնենք այն
բանի վրա, որ կարիքն ու անբախտութիւնն են նրանց
այնպէս ողորմելի դարձել, ուստի՝ սիրայօժաւ կեր-
պով մեկնենք նրանց օգնութեան ձեռքը և ժամանակ
առ ժամանակ տանենք մեր երեխաներին անբախ-
տների թաղերը, ուր նրանք կարող են իրենց աշքով
տեսնել ամեն տեսակ զրկանքներ։ Անա այս եղանակով
մենք իսկական բարեսրտութեան և կարեկցութեան
հաստատ հիմք գցած կը լինենք անխափի դէպի բոլոր
մարդիկ։

Թող բարի մայրիկը չը կարծի թէ այդ անկեղծ
բարեսրտութեան զարդանալով՝ կը փոքրանայ երե-
խայի սէրը դէպի ինքը, թող չը խարի իրեն թէ ե-
րեխային անտարբեր մեծացնելով ուրիշ մարդկանց և
կենդանիների նկատմամբ, աւելի կը տաքացնի նրա սիր-
ութ դէպի ինքը։ Այդպէս վարւող մայրը հետեած կը
կը լինի փոքրի եսական ընթացքին, միայն իր համար
կրթած կը լինի իր երեխային և կը լինի եսասէր
մէկը, որը մեծացնում է այլևս մի ուրիշ եսասէր։ Բնդ-
հակառակը՝ անկեղծ բարեգործութեան և դէպի մեր-
ձաւորը ունեցած զործունեաց կարեկցութեան պարարտ
հողի վրա աւելի կածի և կուժեղանայ երեխայի սէրը
դէպի հարազատ ծնողները։ Այն սէրը, որ հիմնւած է
մերձաւորի սիրոյ վրա, հետզհետէ տարիներով ոչ
թէ չի փոքրանայ երեխայի մէջ, այլ ընդհակառակը՝
խորին մեծարանքի և ակնածանքի կը փոխւի դէպի իր
բարի և խելացի ծնողը։

ԵՐԵՄ.ՊԱՏՈՂՆԵՐԻ ՈՒ ՇԱՌԴՆԵՐԻ ՎԱՐՍՈՒՅ- ՄՈՒՆՉՅ ԳԼՈՓԻ ԵՐԵԽԱԾՆ

Երեխան մեծերի ընկերութեան մէջ։—Հիւրերը։—Գովասանքներն
ու նախատինքները։—Խօսակցութիւնը։—Համեստութիւնն և զո-
ոսպութիւնը։ Ժաղըն ու հեղնութիւնը։—Հանաքները։—Համաձայ-
նութիւնը ծնողների կամ զաստիարակների մէջ։

Պէտք է այստեղ վերջապէս դաստիարակների ու-
շագրութիւնը դարձնենք մի քանի հանգամանքների

վրա, որոնք երեխայի բարոյական զարդացման ընթացքը խանդարում են:

Ամենք մեզ հետ կը համաձայնուեն, որ երեխայի համար մնալու ամենայարձար տեղը մանկանոցն է: Սրանով չենք ուզում ասել որ մանուկը ժամանակ առ ժամանակ չը պիտի աւելի հասակաւորների ընկերութեան մէջ լինի, բայց նրա ներկայութիւնը այսուղ պիտի շատ կարծատել լինի, այլապէս կարող է նոյնիսկ վնասակար լինել: Անկասկած՝ երեխաները չը պիտի վայրենի մեծանան, բայց շատ քիչ ծանօթ մարդկանց մէջ՝ նրանց երկար մնալը միշտ չէ ունենում լաւ հետևանքներ: Յայտնի է որ հիւրերի առջեւ երեխաները լինում են աւելի անկարգ և չարաճի և ամեն տեսակ կամակորութիւն և գծութիւն են անում: Հիւրերով զըրալւած մայրը չի կարող հարկաւոր ուշադրութիւնը դարձնել իր երեխաների վրա, իսկ որանք՝ սովորական հոկողութիւնից աղատւելով իրենց թոյլ են տալիս ամեն տեսակ անկարգութիւններ:

Ընդունենք մի ըստէ որ փոքրիկ ընկերութիւնն և մօր ներկայութիւնը այս բոլոր անյարձարութիւնների առաջը կառնի, բայց և այնպէս՝ մեծերի ընկերութիւնից երեխայի սաացած օգուտները կը լինեն շատ կասկածելի: Զէ՞ ո՞ր հիւրերը իրենց սրբազն պարտականութիւնն են համարում գովասնքով խօսել երեխաների մասին և հէնց երեխին գովարանում են նըրանց, կարծելով թէ այդպիսով աւելի շահած կը լինեն մօր սիրու: Երեխան՝ լսելով այդ չափազանցրած գովասնքները, սիսալ համարում է ստանում իր մա-

սին: Միւս կողմից՝ մայրերն էլ յաճախ պարծենում են օտարների առջև իրենց երեխաներով, իսկ հիւրերը հետները միայն հիանում են, որովհետև էլ ուրիշ բնչ ձար ունեն:

Վերջապէս երեխաների երկարատև ներկայութիւնը տախտկալի է նաև հէնց հիւրերի համար, որոնք եկել են տանտէրերի հետ խօսելու կամ ժամանակ անցկացնելու համար, իսկ ստիպւած են լինում նրանց երեխաներով զբաղւել: Ոյսպէս ամեն տեսակէտով հիւրասենեակը երեխաների համար մնալու վայելուչ տեղը չէ:

Բայց նոյնպէս անյարմար տեղ է նրանց համար նաև ծառաների սենեակը: Փոքրաւորները առհասարակ երեխաների հետ վարւել չեն իմանում, և կամ երես են տալիս նրանց, կամ միշտ չարացնում: Եւ սովորաբար չեն քաշում երեխաների ներկայութիւնից և իրենց լեզվին կատարեալ ազատութիւն են տալիս և ինչ ասես կեղտոտ խօսք և հայահոյանք չեն բաց թողնում բերեանից: Վերջապէս ծառաները սիրում են անմիտ-անմիտ բաներ սովորեցնել երեխաներին, կարծես ուզենալով այդպիսով ցոյց տալ իրենց մտաւոր գերազանցութիւնը:

Ինչպէս վերև բերած դէպքերում բազմամարդ ընկերութիւնը վատ է ազդում երեխաների վրա, նոյնպէս և երեխաների մասին հէնց նրանց ներկայութեամբ շարունակ խօսելը վիասակար հետեանքներ է ունենում: Ամենից աւելի կրթական գործը աջողւում է այնտեղ, որտեղ քիչ են խօսում երեխաների մասին և աշ-

ւելի շատ են անում նրանց համար: Այդ է պատճառը որ մանկական կրթութիւնը տուժում է այն աներում, որտեղ շատերն են այդ գործին մասնակցում: Մայրը, տառը, մօրաքոյրն և հօրաքոյրը՝ իրենց մինումարին սրտանց սիրելուց, էլ ուրիշ բանի մասին չեն խօսում, միմեան նրա մասին: Ուղիղ է պատահում է որ նրանք միշտ նրա բարեմանութիւնների մասին, չեն խօսում այլ և պախարակում են նրա պակասութիւնները: Երեխան գուցէ չի էլ հասկանայ այդ գովասանքն կամ պարսաւանքը, որ յաճախ առւում է նրա համար անմատչելի լեզով, բայց և այնպէս կը հասկանայ որ իր վրա է խօսքը, և կակսի մեծ գաղափար ունենալ իր նշանակութեան մասին և իրեն կը համարի տան գըլուխն ու առաջին մարդը:

Ո՞վ չը գիտի որ այդպէս ականջի ծայրով լսած գովասանքը երեխային մեծամիտ և անհամեստ է դարձնում, իսկ պարօսաւանքը թացնում է ամօթի զգացմունքը: Բայց չէ որ այս երկու զգացմունքների կը թութիւնը պիտի լինի այն ամենազլսաւոր նպասականից մէկը, որոնց վրա պիտի ուշադրութիւն դարձնի ամեն մի գաստիարակ, որովհետեւ նրանք են կազմում կրթական ամենաազդու միջոցները: Զը պէտք է կարծէնք թէ փոքր երեխան ի՞նչ է հասկանում և ի՞նչ է իմանում զանազանել հրապարակական պարսաւանքը առանձնակի, երես առ երես յանդիմանութիւնից: Նոյն իսկ չորստարեկան մանուկը շատ լաւ է դդում այն զանազանութիւնը, որ կայ այդ երկու տեսակ յանդիմանութիւնների մէջ, և շատ չնորհակալ է լինում մեզ-

նից, երբ այնքան շրջանկատ ենք լինում, որ չենք յայտընում ուրիշներին նրա յանցանքը: Այս եղանակով ոչ թէ միայն չենք պատռում նրա երեսի ամօթը, այլ և արծարձում ենք ազնիւ պատւասիրութիւն, որը նրան պահում է ամեն անվայել արարմունքից:

Արդէն ցոյց տւինք, թէ ինչ նշանակութիւն ունի համեստութիւնը, և եթէ համեստութիւնը պիտի հստակաւոր մարդու բարեմանութիւններից մէկ լինի, ուստի կեանքի հէնց առաջին շրջանից պիտի խնամքի առարկայ դարձնեն այդ կողմը: Քանի՞-քանի՞ մայրեր սաստիկ մեծ ուշը են դարձնում գեղեցիկ զգեստի վըրա, հիանում են իրենց երե խայով, ինչպէս մի տիկնիկով, զուգում զլպլտում են նրան, հրամայում են որ մէկ լաւ նայի իր պատկերին հայելու մէջ, և հպարտանում են, երբ կողքից անցնողները ետ են նայում և զննում են իրենց տղային կամ աղջկան: Արդեօք այս ամենի բնական հետևանքը այն չէ լինի, որ երեխան էլ կը սկսի չափազանց մեծ նշանակութիւն տալ իր արտաքինին:

Անյարմար է նոյնպէս հայեացքով կամ խօսքով երեխային զգալ տալ մեր հիացմունքը: Մանուկը հասկանում է մայրական աշքերի արտացյատութիւնը և կաշող է հեշտութեամբ զանազանել նրանց մէջ հանդիսու, բայց սրտարուղիս սէրը կրօստ հիացմունքից:

Ամօթի զգացմունքից առաջ է գալիս այն, որ երեխաները շատ գիւրազգաց են լինում և շուտ են վիրաւորում ծաղրանքից: Երեխան՝ կամենալով ճնշել իր մէջ այն անախորժ տպաւորութիւնը, որ արել է նրա

վրա ծաղը, սկսում է միենոյն զէնքով պաշտպանել և հէնց որ կարողանում է՝ վճարում է ակն ընդ ական և թոյլ է տալիս իրեն ծաղրել նոյն խոկ իրենից շատ աւելի հասակաւոր մարդկանց: Այսպիսով նա սովորում է արհամարհել այն մարդկանց, որոնց պիտի յարգէր և պատէր: Միւս կողմից՝ պատահում է որ ուղիղ է՝ պատիարակները չեն ծաղրում երեխային, բայց և չեն սաստում նրան, երբ նա սկսում է զանազան ծաղրածութիւններ անել, օրինակ՝ ձեւցնում է ուրիշներին, ծածածութիւններ է անում, և նոյնիսկ ծածուկ ուրախանում են, այդ ամենը խելքի երեխայի նշան համարելով: Երեխանները կարծում են իրը թէ այդպիսով մեծերին զւարծութիւն են պատճառում, ամեն ջանք են թափում այդպիսի մասխարութիւնների վրա և ուղղակի անտանելի են դառնում:

Եւ եթէ չը պէտք է թոյլ տանք որ երեխան ծաղրի ենթարկէի, չը պէտք է որեմն մենք էլ դառնանք նրա ծաղը ու ծանակ: Թող մեծերը մասնակից չը լինեն այնպիսի խաղերին, որոնց մէջ դէմքին մուր քսելը կամ ծիծաղաշարժ ձեւը ընդունելը դրդում են երեխային մեծերի վրա ծիծաղելու: Այդ ասենը չափազանց երես է տալիս երեխաններին, պատում է երեսի ամօթը և նրանք մոռանում են այն տարածութիւնը, որ կայ իրենց և դաստիարակների մէջ:

Բայց ամենավասակար ներգործութիւնն է ունենում կրթական գործի վրա անհամաձայնութիւնը երեխայի ծնողների կամ ինսամակալների մէջ: Արդէն վեր յիշել ենք թէ որչափ այդ անսերդաշնակութիւնը

նպաստում է երեխայի մէջ ստախօսութեան արմատ րսնելուն, բայց գեռ ևս ուրիշ շատ պակասութիւններ կարող են առաջանալ, եթէ հայրը պախառակում է այն, ինչ որ մայրն է պատւիրում, և ընդհակառակը: Որտեղ որ գոյութիւն ունի մի այդպիսի ակներեւ անհամերաշխութիւն ծնողների հայեացքների մէջ կըրթութեան մասին, այնտեղ իսկապէս խօսք չի կարող լինել կրթութեան մասին, այնտեղ սիստեմատիկ կերպով երեխանների մէջ միայն պակասութիւններն են պատւաստում առաքինութիւնների փոխարէն: Այդ հակասութիւնը կրթական վերաբերմունքի մէջ շփոթում է երեխաններին, և սրանք այս կամ այն բոպէին կանգնում են ծնողներից նրա կողմը, ով որ աւելի է նըրանց երես տալիս, և կորցնում է ամեն յարգանք կամ սէր միաժամանակ թէ գէպի հայրը և թէ գէպի մայրը:

Ընդհանրապէս, ամփոփելով մեր ամբողջ ասածը, պէտք է կրկնենք որ մանկական կեանքի այս շրջանում կրթութիւն պէտք է ունենայ մեղմ զսպման ըընաւորութիւն:

Վ Ե Բ Զ Ա Բ Ա Ն

Երանի թէ ծնողները վերջապէս հասկանան և ըմբռնեն, որ ինչպէս երկրագործների համոզմունքով՝ ամենառատ հունձը տալիս է այն ցանքսը, որը մառախուղի և մէզի ժամանակ է արւած, այնպէս էլ բոլոր բարեմանութիւնների և առարինութիւնների առաջին ցանքսը տեղի է ունենում կեանրի առաջին միզապատ տարիներում:

Երանի թէ աւելի քիչ արհամարհեն մանկութեան այդ առաջին շրջանը, աւելի քիչ անփոյթ գլտնըւեն այդ տարիներում, անկեղծ կերպով միաք դադարեցնեն այդ ժամանակի երեսյթների վրա և մտքերի փոխադարձ փոխանակութեամբ օգնեն իրար: Այն ժամանակ նրանք այն յուսախարութիւններից խոյս տըւած կը լինեն, որոնք այժմ այնպէս յաճախ են կը լրնեում, այն ժամանակ հրեշտակը մանկական հասակում՝ չի դառնայ Աստծու կրակ ու պատիժ աւելի ուշ հասակում, երբ յանկարծ երեան են դալիս այնպիսի արատներ և պակասութիւններ, որոնց գոյութեան մասին ծնողները առաջ չէին էլ կասկածում, —որովհետեւ կը թութիւնը ոչ թէ մի յայտնի բոպէի արդիւնք է, այլ մի երկար կապակցութիւն է պատճառների և նե-

տեանքների, պատճառականութեան անընդահատ մի շղթայ: Իսկ չէ որ այդ գործը ահազին կարենութիւն ունեցող մի գործ է, քանի որ երիտասարդ սերունդի վրա է հիմնւած հասարակութեան ամբողջ ապագան, իսկ մանուկ սերունդի վրա՝ երիտասարդութեան ապագան: Ուստի ամեն մի բարի և խելացի մարդ, որ առանձին հոգատարութեամբ և հմտութեամբ մեծացընում է իր երեխանաներին, մի օծեալ, սրբազնազործ մշակ է, որ կառուցանում է իր երկրի բարօրութեան սուբր սեղանը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

երես

1. Անք.—ինչպէս արծարծել ոչըը երեխայի սրտում.
—փաղաքշանքներ, —պարզեներ, —մերժում: 3—11
2. Հնազանդութիւն.—Երեխայի կամքը, —ինչպէս ընտելացնել հնազանդւելու, —հրաման և հրամաններին հնազանդւելու ընտելացնելը, —անհիմն պահանջներ: 12—20
3. Ընտելացում.—ի՞նչպէս սովորեցնել ժամանակին ուտել խմել, քնել, բնական պէտքերը կատարել, հագնւել: —Դիմացկանութիւն: 21—27
4. Օրինակ.—Նմանւելու ձգտումը, —մեր օրինակը, —մեծերի օրինակը, —վատօրինակի առաջն առնելը, —հասակակիցների ընկերութիւնը, —հսկողութիւնը: 27—32
5. Մտքի կրբութիւնը.—Մտաւոր զարգացումը, —զգայարանները, —ըմբռնողութիւնը, —պատմութիւն, զրոյցներ, —նրանց ազդեցութիւնը, —ընդունակութիւնները, —պատկերն ու նկարները, —բնութեան դիտողութիւնները: 32—41
6. Խաղերը.—Ծծկերի խաղերը, —աւագ, տիկիններ, ուրիշ խաղալիքներ, —կաղապարումը, խաղալիքների և խաղի նպատակը. —ի՞նչպէս ընտելացնել աշխատանքի 42—49

7. Դաստիարակի մասնակցութիւնը խաղի մէջ.—իաշ-
դալիքների շատութիւնը.—խաղի տեսակները.—նմանո-
ղութիւնը.—օրինակը.—երեխայի ինքնուրոյն աշխա-
տութիւնները.

49—56

8. Խաղալիքների ընտրութիւնը ու արժեքը, նրանց
ազգեցութիւնը, խաղալիքների տեսակները.—թանգա-
րին և էժանազին խաղալիքներ.—երեխաների ձեռքով
պատրաստած խաղալիքներ. — խաղն ու աշխա-
տանքը.

56—60

9. Ստախօսութիւն.—երեխայի ստախօսութիւնը.—խո-
ստմնազանցութիւն, քօղարկումները.—դայեակի ստա-
խօսութիւնը.—մօր ստախօսութիւնը, սպառնալիկի աղ-
դեցութիւնը, պատժի երկիւղը, ակամայ և զիտաւոր-
հալ ստախօսութիւնը.—օրինակը.

60—70

10. Բարեսրութիւնը.—Բարեսրութեան և համակրու-
թեան առաջին նշանները.—սիրալիրութիւն և բարեա-
ցակամութիւն պահանջելը. զոհողութիւն, ներհակու-
թիւն, նախատինք, բարի օրինակ, համակրութիւն, սէր
դէպի մերձաւորը.

70—75

11. Երջապատողների ու ծնողների վերաբերմունքը դի-
պի երեխան.—երեխան մեծերի, ընկերութեան մէջ. —
հիւրեր.—գովասանքներն ու նախատինքները. — խօ-
սակցութիւնը.—համեստութիւնն ու գոռողութրւնը. —
ծաղրն ու հեզնութիւնը.—հանաքները.—համաձայնու-
թիւնը ծնողների կամ դաստիարակների մէջ. 75—81

83—84



«Ազգային գրադարան



NL0150258

